1895 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 (18) ՇԱԲԱԹ

№. 102—ՏԱՄՆԵՐԵՔՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 102

1895 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6 (18) ՇԱԲԱԹ

ԱՐԶԱԳԱՆՔ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կես տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։

Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանողագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Գենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.

կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԳԷՈՐԳ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑԸ իւր որդոց և քրոջ գուսար օր. ՄԱՐԻԱՄ ՄԱՏԻՆԵԱՆի հետ, ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ, տիկնայք ԴՅՈՒՇԱՆԷ ՄԱԳԱԿԵԱՆԸ և ՀԵԼԻՆԷ ԱԻԹԱՆԴԻԼԵԱՆԸ յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ սիրեցեալ ամուսնու, մօր և քրոջ՝

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆի

մահը, որ տեղի է ունեցել սեպտեմբերի 2-ին, 1½ ժամին գինի ճաշու։ Յուղարկաւորութիւնը լինելու է սեպհական տնից (անկիւն մեծ Վօրօնցովայա և Սապերնայա փողոցների), ուրբաթ, ամսոյս 8-ին, տաւուտան ժամը 10-ին, գէպի Ղանաց մայր եկեղեցի, իսկ թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ (2—1)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ստորև յայտարարում է այն անձինքներին, որոնք պահում են տրակտիրներ, գինետներ, բուֆետներ, հիւրանոցներ, ճաշարաններ, դարեջրատներ տաք կերակրով, գինեվաճառանոց, պահեստներ, թէյատներ, ուր ծախւում են նախաճաշիկ և տաք կերակուր, քաղցրաւենեաց խանութներ, ուր զանազան ուտելիքներ են վաճառվում, ուտելիքների խանութներ և պանդոկներ, որ համաձայն յունիսի 8-ին 1893 թ. բարձրագոյն հաստատուած պանդոկային սահմանադրութեան 35, 42 և 43 յօդուածների, պանդոկային տուրքերի բաժանելը առանձին հաստատութեանց վրայ պիտի վերջնականապէս կազմուի ոչ ուշ քան հոկտեմբերի 20-ը և եթէ այդ բաժանելը չկազմուի մինչև հոկտեմբերի 20-ը, այն ժամանակ բաժանումը պիտի կազմի իւրը քաղաքային վարչութիւնը. ուստի քաղաքային վարչութիւնը խնդրում է վերոյիշեալ հաստատութիւնները պահողներին շտապել օրինական վկայագրեր վերցնել 1896 թուին պանդոկային գործը վարելու իրաւունքի համար, որպէս զի հնար լինի ժամանակին հարկարաժան յանձնաժողով ընտրել։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Անհրաժեշտ է։

Պետութիւններ և Դուռը։

Տառապեալ Հայաստան։

Կայսերական Պարլամէնտ. — Համայնքների պատասխան։

Ցուցմունք Հայաստանում.—Թիւրքի արքունական.—Դուռը և պարտը յիմարացած։

Պետութիւններ և Սուլթան։

Սահմանական միջոցներ։

Հերքումն։

Էլի՛ խաղեր։

Քննիչ մասնախմբի զեկուցումը։

Ընդունուած են ռէֆորմները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիֆլ. քաղ. խորհրդի որոշումը։ Բաթումից։ Բազուից։ Սանահնից։ Հաղբատից։ Նուխուց։ Նամ. խմբ.։ Խոլերան Տ.-Հայոց։ Բանտային վարչութեան գլխաւոր կառավարչը Գոլիկասով։ Մի բիծ, որ պէտք է սրբուի։

ՏԱՃԿՍ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Մուշից։ Նամակ Վանից։

ՖԵԼԻԵՏՕՆ.— Երջանկութիւն։ Թաւոնչաններ և փոստեր։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

I

Սկսուել է արդէն երկրորդ տարին այն օրից, երբ Մշոյ դաշտը և Սասունի լեռների լանջերը ողողուեցին հայ մանուկների ու կանանց անմեղ արիւնով։ Այս տարուան օգոստոսի 13-ին Կ. Պոլսոյ հայ եկեղեցիների զանգակները տխուր զօղանջիւնով հրաւիրում էին Պոլսոյ հայերին գալ և աղօթել նահատակուած սասունցիների հոգիների համար։ Տխուր և յուսահատական պարտաւորութիւն, մի տեսակ մխիթարութիւն, որ ամենաճարտար ապացոյց է ոգոյ և սրտի յաւերժական անմխիթարութեան։ Կը գայ երկրորդ տարեդարձը, կանցնի և երրորդը և դուցէ Սասունի կոտորածի տօնը կը մտնի եկեղեցական ու ազգային տօնների շարքը, և մենք տարէնը մի անգամ ժողովուելով վառուող մոմերի մէջ ու խունկի ծխի մէջ՝ կերեակայենք թէ կատարում ենք մեր պարտաւորութիւնը։ «Այդ իսկ են վարձք դոցա»,—կարող է և իրաւունք ունի մեզ համար ասել ամեն մի մարդ, որ համակրութեան, սիրոյ և զգացմունքների խնդիրներում խօսքերի աշխարհում չէ ապրում, այլ փնտրում է գործ և ապացոյցներ։ Բայց ուր է այդ գործը, ուր են այդ ապացոյցները։

Սասունի կոտորածը մի երկու օրուան մէջ հայ ազգից խլեց տասնեակ հազարաւոր հոգիներ.—այդ հետևանք էր բարբարոսական խըժդժուժ յարձակման. այնու ամենայնիւ դա մի տեսակ պատերազմական կերպարանք ունէր, կատարուեց սրով, հրացաններով և թնդանօթներով, կատարուեց այնպիսի լիակ յանդուգն ազմուկով ու հուսայով, որ ամբողջ Եւրոպան գլխիցդ էր։ Բայց միթէ այժմ, այս բոլորից վերջացած է այդ կոտորածը, միթէ այժմ, այս բոլորից չէ՞ շարունակվում հայերի կոտորածը Տաճկաստանում։

Անթիւ, անհամար յուսահատական աղերսագիրը, այսօր այնտեղ ամեն օր երացող դաղթականների խմբերը, հաշմանդամ, կիսախելագար, յուսահատութեան մէջ իրրև թափառական հրէայ շարունակ փախչող պանդուխտները, այդ բոլորը արտայայտում է այն սոսկալի քաղաքականութիւնը, որին այժմ հետևում է տաճիկ կառավարութիւնը։ Նա այլ ևս յայտնապէս սուր չէ շողացնում, որ նրա փայլը Եւրոպայի աչքին ընկնի։ Նա գիտէ և փորձով գիտէ որ քաղցը, ապրատութիւնը քաղաքական խնդիր և միջամտութիւն չեն յառաջացնի։ «Մարդիկ մահկանացու են և մեռնում են, կասի տաճիկ կառավարութիւնը, իրենք են մեռնում, այժմ էլ ես չեմ կոտրուում նրանց»։ Բայց թէ հայ ժողովուրդը տաճկական Հայաստանում կոտորվում է, թէ նա փախչում է սովից, այդ այժմ յայտնի է ամբողջ աշխարհին. բայց կարծես միայն յայտնի չէ այն հայերին, որոնք ապրում են քաղաքակրթուած քրիստոնեայ պետութիւնների հովանաւորութեան տակ և ցամաք հացի վրայ չեն մրտածում, որովհետև գաղթայ, մերը ու կարող շատ ունին ուտելու։

Այդ բոլորի հետ միասին կայ արդեօք մի հայ աշխարհիս երեսին, որ չհետաքրքրուի հայկական խնդրով, որ ապահ անհամբերութեամբ չսպասէ Եւրոպայից և Պոլսից հասած հեռագրական լուրերին, որ ամեն օր ամեն հանդիպողից չհարցնէ. «ինչ եղաւ հայկական խնդիրը, ինչ եղան ռէֆորմները, ինչ են անում եւրոպական պետութիւնները»։ Բայց ով է հարցնում, թէ ինչ է ուտում արանից և կիսան կովից ու ոչխարների հօտերից, տնից ու տեղից զրկուած ժողովուրդը. ով է հարցնում թէ ինչով է նա պաշտպանվում տաճիկ ոստիկանների, զինուորների ու քուրդ հրոսակախմբերի յարձակումներից։ Ո՛չ ոք։ Որովհետև ամենքն իրենց խաբում են, թէ թղթի վրայ գրուած ծրագիրը, որի հետ կատաւթով է անում Դուռը, կարող է երաշխաւորել տաճկահայի ապահովութիւնը։ Իսկ փաստն այն է, որ այդ տաճկահայը օրական հացի կարօտ է, որ նա իր ձեռին մի դանակ անգամ չունի պաշտպանուելու քրդի և տաճկի զինուորի ու ոստիկանի տրաղաձիգ հրացաններից և ատրճանակներից։ Միակ զէնքը, որ ունի տաճկահայը, նրա ոտներն են, որոնք փախչել գեռ կարող են։ Բայց ում համար են այսչափ ազմուկները, ռէֆորմների ծրագիրը, եւրոպական վերահսկիչ յանձնաժողովը, եայն եայն, եթէ ոչ այդ թշուառ ժողովրդի համար, և եթէ այդ ժողովուրդը քաղցից կոտորուի և գաղթի իւր երկրից, ում համար պիտի գործադրուի այդ ծրագիրը։

Ահա այն ծանր մտատանջութիւնը, որով համակուած են թէ Եւրոպայի և թէ այստեղի հայերից նուրանք, որոնք խոցվում են տաճկահայի վիճակով և գիշեր ցերեկ զբաղուած են այդ վիճակը բարելաւելու խնդրով։ Բայց ինչպէս, հրաշքներով։ Ս. Հ.

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՈՒՌԸ

(«Daily News» 6 սեպտ.)

Սեպհական թղթակցից

Բեռլին, 5 սեպտ.

Մօտերս ես հաղորդեցի, թէ Գերմանիայի կառավարական շրջանակներում մտադրութիւն չի նկատվում պաշտպանելու այն միջոցները, որոնցով Հայկական խնդրի Դորդեան հանգոյցը լուծուէր։ Սակայն այսօր „Vossische Zeitung“ լրագիրը հետևեալն է գրում.

«Հայկական գործերը տակաւին միևնոյն դրութեան մէջ են մնում, և օրեցօր ձանձրալի են դառնում տեսնել Դրան յիմար և անմեղական քայլերը։ Արդէն ժամանակն է վճռական քայլն անելու, լինի այդ Բեռլինի դաշնագիրն ստորագրող բոլոր պետութեանց կողմից ընդհանուր յայտագիր ներկայացնելով, թէ կոնֆերենցիա կազմելով, թէ Կ. Պոլսի հանդէպ ծովային ցոյց կատարելով և կամ մինչև անգամ հայկական նահանգները գրաւելով։ Դուռը շարունակում է յամառել, յուսալով թէ պետութիւնները նրա դէմ ընդհանուր այժերով գործելու համար անկարող կը լինեն միանալու. բայց նա կը հասկանայ՝ ի վնաս իւր, որ ենթադրութիւնը առաւել քիչ հաւանական է Թիւրքիային պաշտպանելու խնդրի նկատմամբ։

ՏԱՌԱՊԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

(Նամակ «Daily News»-ի խմբագրութեան)

Սեծր, ես կին եմ. կարդացի Ձեր լրագրի էջերում, թէ կարկը կայ, որ Անգլիայի կանայքը խորին համակրութեամբ ուշ դարձնեն Հայաստանի սոսկալի տառապանքների վրայ։ Բոլորովին ճշմարիտ է, ինչպէս ասուած էր Ձեր երէկեան յօդուածում, թէ համակրութեան հրաւէրը պէտք է հիմնուի մարդասիրութեան լայն գաղափարի վրայ, որ սեռի խտրութիւն չէ ճանաչում։ Ուրեմն ամեն մի մտածող և զգայուն կին աւելի ևս պէտք է աշխատէ, որ մեր սեռը մանաւանդ չյապաղի արտայայտելու իւր խորին ցաւակցութիւնը գէպի տառապեալները և մեր դայրոյթը՝ կատարուած չարագործութիւնների դէմ։ Ուստի յատկապէս հրաւիրում եմ իմ հայրենակից բոլոր կանանցը, որոնք կարող են ուրիշների օրերի վրայ ազդել։ Փող տալը, գժբաղդաբար անհամապատասխան արտայայտութիւն է այն զգացմունքի, որ այս գործում մենք ամենքս պիտի զգանք։ Բայց հէնց այդ անհամապատասխանութիւնը կը ստիպէ մեզ կատարել այն, ինչ որ յիրաւի կարող ենք։

Անգլուհի։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԷՆՏ.—ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽՈՒՄ

(«Daily-News» 4 սեպ.).

Մ-Ր ԳՐԻԲՍՈՆ ԲՈՒՐԼՍԸ հարցնում է արտաքին գործոց փոխ-քարտուղարից, թէ «Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնն ստացել է արդեօք թիւրքաց պետութիւնից որևէ տեղեկութիւն Թունիսի, Ֆրանսիայի և Անգլիայի մայրերի 11-ին միարան յայտագրով առաջարկած ռէֆորմների առթիւ. կառավարութիւնն ստացել է արդեօք Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի պաշտօնական հաւանութիւնը. Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնը մտադիր է արդեօք գերմանական, աւստրիական և իտալական կառավարութեանց հետ խորհրդակցել կամ դրանց հետ համաձայնութիւն կայացնել. կարող են արդեօք գործին վերաբերեալ թղթեր ներկայացնել և կամ տեղեկութիւն տալ խնդրի ներկայ դրութեան և կառավարութեան ապագայում բռնելիք ընթացքի վասին. կարող են արդեօք ասել, թէ բացի դիպլոմատիական առաջարկներից և բանակցութիւններից ուրիշ միջոցներ էին ձեռք առնուած, առանց դրանց շարժառիթները պարզամէնտին զեկուցանելու։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ.—Թիւրքաց կառավարութիւնից մի քանի տեղեկութիւններ են ստացուած, որոնց ըմբռնգութիւնը ճշտիւ հաղորդել է մամուլը։ Դժբախտաբար դրանք չեն կարող զոհացուցիչ համարուել։ Վերոյիշեալ երեք պետութիւնները պաշտօնական հաւանութիւն չեն տուել ռէֆորմների ծրագրին։ Բայց յայտնի է, որ նրանք համակրում են ռէֆորմները և Դրանը ոչ պաշտօնապէս զոհացուցիչ խորհուրդներ են տուել։ Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնը անկարող է յայտնել, թէ գործունէութեան ինչ ճանապարհ կընտրի։

Մ-ր ԲՈՒՐԼՍ. Կարմ է արդեօք փոխ-քարտուղարը յայտնել, թէ կառավարութիւնն ինչ հիմք ունի կարծելու, թէ երեք պետութիւնները տրամադրուած են յօգուտ հայկական խնդրի։

Մ-ր ԿԵՐԶՈՆ. Հարկաւ ես ոչինչ չէի ասիլ, եթէ առ այդ արդարացուցիչ հիմունքներ չունենայի։ (*Լսեցէք, լսեցէք*)։

Մ-Ր ԲՈՒՐԼՍ. Յարգելի ջէնտըլմէնն այդ հիմունքները կը՞ներկայացնի՞ արդեօք պարլամէնտին։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ. Ո՛չ, սեծր. ի հարկ, ո՛չ։

Մ-Ր ԲՈՒՐԼՍ. Կառավարութիւնն արդեօք ուշ է դարձրել ռուսաց «Նովոստի» լրագրի յօդուածին, ուր ասում է, թէ ժամանակն է, որ հայերին պաշտպանող երեք պետութիւններն իրենց առաջարկները պահանջեն Դարդանէլում ծովային ցոյց կատարելով. և կառավարութիւնը մտադիր է արդեօք այդպիսի միջոց անել և կամ մասնակցել։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ. Յիշեալ լրագիրը պաշտօնական բնաւորութիւն չունի, և նրա յօդուածի վրայ կառավարութիւնն ուշ չի դարձրել։ Այդ տեսակ ոչինչ ուսաջարկութիւններ չեն եղել։ Եւ հասարակական շահերի նկատմամբ ցանկալի չէ յայտնել, թէ կառավարութիւնը որպիսի միջոցներ ձեռք կառնէ։ («Լսեցէք, լսեցէք»)։

Մ-Ր ՎԻԼՍՈՆ. Կառավարութիւնն արդեօք հաստատ տեղեկութիւն է ստացել՝ թիւրքաց զօրքերի՝ Հայաստանում, Երզնկայի մօտ կատարած բռնութիւնների մասին և ձեռք է առել արդեօք որևէ միջոց՝ արգելելու կոտորածը, որ հնարաւոր է և որից ահով ստիպում է քրիստոնեայ ժողովուրդը։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ. Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնը Կ. Պոլսի գեսպանից այդ տեսակ հեռագիր է ստացել։ Նա՝ հիմնուելով Էրզրումի հիւպատոսից ստացած տեղեկութեանց վրայ, յայտնում է, թէ մօտաւորապէս Օգոստոսի 12-ին թիւրքաց մի գնդապետի վրայ անյայտ ուղղակներ են յարձակուել և նրա հետևորդներից մէկին սպանել։ Թիւրք վարչութիւնները կատարուած յանցանքը հայերին են վերագրում և զինուորական մեծ այժ է ուղարկում, որ՝ ինչպէս լսում է, կոտորում է գիւղերն ու վանքերը և զանազան սրբապղծութիւններ է կատարում։ Մի քանի հայեր բանտարկուած են Երզնկայում. համայնքների պատուաւոր անդամները պաշտպանութիւն գտնելու համար դիմեցին Էրզրումի առաջնորդին։ Նորին Մեծութեան՝ Կ. Պոլսի դեսպանն խիստ դիմում է արել օսմանեան կառավարութեանը, մեծ վեղիրը յայտնել է, թէ հեռագրով հրամայուած է Երզնկայում կալանաւորուած հայերին ազատել։

Մ-Ր ԲՈՒՐԼՍ. Մտադիր է արդեօք յարգոյ ջէնտըլմէնն այդ զեկուցումը պարլամէնտին ներկայացնել։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ. Ո՛չ, ես այդպիսի մտադրութիւն չունիմ։

Մ-Ր ԲՈՒՐԼՍ. Երբ նախարարը չէ յայտնում, թէ որտէ տեղեկութիւն գաղտնի է և նրա հրատարակելը վնասակար, միթէ մենք իրաւունք չունինք պահանջելու, որ մեզ յայտնուն։

ՍՊԻԿԷՐ. Յարգելի ջէնտըլմէնը իւր պատասխանի մէջ չասաց, թէ այդ զեկուցումը գաղտնի չէ։ Ընդհակառակը ես այնպէս մտածեցի, թէ գաղտնի է։

Մ-Ր ԲՈՒՐԼՍ. Եթէ նա այդպէս է ասել, ապա ես յետ եմ առնում իմ խօսքը։

ՍՊԻԿԷՐ. Ես չնկատեցի, թէ յարգելի ջէնտըլմէնը զեկուցման մասին է խօսում։ Նա յայտնեց. միայն այն տեղեկութիւնները, որ հասել են իրեն։ Դրանը ներկայացրած առաջարկներով յայտնուած են արդեօք այն արգելքները, որոնք անհնարին էին դարձնում Անգլիայում ժողովուած նպաստները Սասունի կարօտեալներին բաժանել և հարկաւոր միջոցները ձեռք կառնուն արդեօք, որպէս զի նպաստներն ըստ կարելոյն փութով բաժանուին։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ. Կ. Պոլսի դեսպանից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ նպաստների բաշխումը Սասունում այժմ դժուարութիւնների չի հանդիպում և թէ մ-ր Համպսոնը՝ Մուշի բրիտանական գեսպանը, թիւրք վարչութիւնների հետ համերաշխ է գործում։ Մ-ր Համպսոնից տեղեկութիւններ կամ խնդիրներ չեն ստացուած իւր առաջիկայ գործունէութեան մասին։

Մ-Ր ՊՐՈՎԻՆՏ. Ի նկատի ունենալով, որ Սասունի կոտորածի քննիչ թիւրք մասնախումբը հրատարակում է իւր զեկուցումը, արդեօք Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնը չի՞ հրատարակիլ Բրիտանիայի ներկայացուցչի յայտագրերն ու զեկուցումն։

Մ-Ր ԿԵՐԶՈՆ. Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնը չէ՞ խորհրդակցէր այդ պետութեանց հետ, հակառակ դէպքում ես չէի կարող ոչինչ ասել։

Մ-Ր ԲՈՒՐԼՍ. Խորհրդակցութիւն, բայց ոչ համաձայնութիւն. այսպէս չէ։

Պատասխան չեղաւ։

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.—ԹԻՒՐՔԻ ԱՐԹՆԱՆԱԼԸ.—ԴՈՒՌԸ և ՊԱԼԱՏԸ ՅՈՒՄԱՐԱՑԱԾ

(«Daily-News» 5 սեպտ.)

Սեպհ. թղթակցից Կ. Պոլիս, 31 օգոստոսի.

Մայրաքաղաքս հասնող բոլոր տեղեկութիւնները յայտնում են, թէ Հայաստան ժողովրդի դրութիւնը շատ վատնգաւոր է։ Ինչ քրիստոնեաներին է վերաբերում, բազմաթիւ ապացոյցներ կան, որոնք վկայում են, թէ նրանք մեծ թուով սովից տանջւում են, թէ պարապմունքները դադարել են և թէ առաջիկայ ձմեռը սոսկալի կարիք կը լինի։ Անկախ ապրիւրներից ծագած բազմաթիւ զեկուցագրեր եմ տեսել, որոնք ոչ միայն սովի մասին են խօսում, այլ և ցոյց են տալիս շատ բռնութիւններ, որոնց դէմ իշխանութեանց օգնութիւնն են խնդրել։ Հաստատուած է, որ մահմեդական ժողովրդի մէջ քրիստոնեաների դէմ մեծ վրդովմունք է տիրում. աւելի ևս վտանգաւոր է այդ վրդովմունքը, որովհետև կապուած է այն համոզման հետ, թէ օտար պետութիւնների կողմից միջամտութիւն չի լինիլ և թէ թիւրք ատելիանաւորների վարմունքը մայրաքաղաքում հաւանութիւն է գտնում։ Բնականաբար հայերը հոգով ընկճուած են՝ չնորհիւ բազմամեայ հարստահարութեանց և վերջին տարուայ դէպքերի։

Նրանց յոյսը դրուած էր, այժմ ևս դրուած է, Անգլիայի և Ռուսիայի միջամտութեան վրայ։ Բայց վերջին չորս ամիսների ձգձգումների ազդեցութեամբ նրանք ընկճուել են։ Իսկ թիւրքերը դիմում են նրանց և հարցնում, թէ ինչ արին օտար պետութիւնները։

Անգլիացիք մի բանում երբէք չպէտք է կասկածեն. եթէ պետութիւնները չպէտք է կարողանան ռէֆորմներն իրագործել, աւելի լաւ կը լիներ, որ Թիւրքիային ոչինչ առաջարկութիւն արած չլինէին։ Այլապէս հայերն աւելի վատթար դրութեան մէջ կը լինին, քան որանից երկու տարի առաջ։ Կարող են ասել, թէ այն փաստը, որ Եւրոպան ուշադրութիւն դարձրեց Սասունի դէպքերի և վերջին տարիներս Հայաստանում կատարուած անարգարութեանց վրայ, ինքն ըստ ինքեան օգտակար է, ըստ որում Դուռը կը

հասկանայ, որ Եւրոպայի աչքերը նրա վրայ են դարձած։

Սակայն այդպէս չէ Թիւրքիայի հայեացքը։ Եթէ համոզուած լինէին թէ այդպիսի դէպքերը ծածուկ չեն մնալ, թէ թղթակիցներին արգիլը և լրագիրներին արգիլը՝ այդ դէպքերի մասին որև է բան գրել՝ անդրդ կըլլին փաստերը թաքցնելու, և թէ այդպիսի դէպքերը կըստիպեն Եւրոպային ռէֆօրմներ պահանջել, այն ժամանակ այդ խօսքի մէջ կարելի կը լինէր ճշմարտութիւն տեսնել։ Բայց Թիւրքերը՝ թէ գաւառներում և թէ մայրաքաղաքում՝ գիտեն, որ Հայաստանում կատարուած անարդարութեանց մասին լիակատար զեկուցումներ են տպագրուել ամբողջ Եւրոպայում։ Հայաստանը լաւ ճանաչող մարդիկ ինձ հաւատացրել են, թէ այնտեղ մի գիւղ չկայ, որի սրճատունը չդառնային վերջին տարուայ դէպքերի և Անգլիայի ու Ռուսիայի հաւանական գործողութիւնների մասին։ Որպէս բրիստոնեաների, նոյնպէս և մահմեդականների գլխաւոր խօսակցութիւնն այն է, թէ պետութիւնները միջամտում են յօգուտ իրանց հաւատակից հայերի։ Երբ այդ միջամտութեան նրկատմամբ բացասական լուրեր էին հասնում, այն ժամանակ ժողովրդի մի մասը յուսալքւում էր, միւսը՝ յուսահատւում։

Փորձ արուեց, որ պէտք է ցոյց տար, թէ արդեօք Եւրոպան կը միջամտի, թէ ոչ։ Իսկ եթէ չմիջամտի, այն ժամանակ մահմեդական ազգաբնակութիւնն ապագայում իրեն ազատ կը համարէ անել ամեն բան, ինչ որ կը ցանկանայ։

Անգլիական ընտրութեանց ժամանակ այստեղ ամենքն առհասարակ կարծում էին, թէ լորդ Սալիսբուրին աւելի տրամադիր կը լինի բարեկամ լինել Դրան հետ, ուստի և կը բաւականանայ ռէֆօրմների աւելի նեղ և անբովանդակ ծրագրով, քան այն՝ որի իրագործումը պահանջում էր սեօր Ֆիլիպ Կերրին լորդ Սալիսբուրիի կառավարութեան կողմից։ Այդ ցնորքները բարեբախտաբար սչնչացան և վերջին երկու շաբաթուան ընթացքում Գլադստընի Հոմերում արտասանած ճառը և առաջին նախարարի լրագրերի պալատում արած յայտարարութիւնը համոզեցին տաճիկ կառավարութեանը, որ հայկական խնդրում քաղաքականութեան փոփոխութիւն չի լինելու։ Այժմ միակ յոյսը պետութեանց անհամերաշխութեան վրայ է։ Մեր հանդէսներից մէկը հաղորդել էր վճռական իրը թէ Ռուսաստանը և Ֆրանսիան յետ են կանգնում Անգլիայի հետ միասին գործելուց և թէ լորդ Սալիսբուրի պահանջները պիտի պաշտպանեն կենդրոնական պետութիւնները. բայց այդ լուրը չէ ապացուցւում այն տեղեկութիւններով, որ ես այստեղ ժողովում եմ։ Երեք պետութիւնները գործել են համաձայնութեամբ և ըստ երևոյթին այսուհետև ևս պատրաստ են գործել միասին։ Կենդրոնական պետութիւնները բարեբախտաբար տրամադիր են խորհուրդ տալ Դրան—և իսկապէս այսպէս էլ արին արդէն—բաւականութիւն տալ երեք պետութեանց պահանջներին։ Բայց կարելի է հաստատ համարել այն, որ ռէֆօրմների մասին ոչ մի ձեռնարկութիւն չի լինի, մինչև պետութիւնները պատրաստ չեն առաջարկութիւններից աւելի մեծ և ազդու միջոցներ գործ դնել։ Սեօր Ֆիլիպ Կերրին և պ. Նելիդովը չեն կարող չխոստովանել, որ իրենց կառավարութեանց և երկրների ազդեցութիւնը ոստի կընկնի, եթէ դուրս գայ, որ իրենք առաջարկութիւն անելու պատրաստ են եղել և մերժման հանդիպել։ Անցեալ շաբաթը լի էր լուրերով այն ազատնալիքների մասին, որ ուղարկուում էին Լօնդօնից և Պետերբուրգից և որոնք Տաճկաստանին նախազգուշացնում էին այն անյապաղ վտանգից, որ Տաճկաստանի վրայ կընդունեն, եթէ ռէֆօրմների ծրագիրը չընդունուի։ Թէ այդ լուրերը անհիմն չեն, այդ նրանից է, որ Դուռն արդէն լսել է, որ այդ տեսակ մի պահանջ իրեն պիտի առաջարկուի։ Այս միջոցին, որ գրում եմ, ոչ մի կասկած չկայ իրազեկ շրջաններում, թէ թիւրքերի և բրիստոնեաների մէջ, որ շուտով վճռական միջոցներ պիտի ձեռք առնուին և թէ պետութիւնները կամ կը թոյլատրեն երկու ամիս որանից առաջ բռնած իրենց դիրքը կամ նոր քայլեր կանեն՝ եթէ ոչ հայերի, գէթ երեք պետութեանց դիւանագիտական պատուի համար։

Արժէ ցոյց տալ Թիւրք ազգաբնակութեան ամենաաւելի մասի այժմեան վերաբերութիւնը։ Թալ տուէք ինձ ամենից առաջ ասել, որ ես ամենուին չեմ հաւատում եւրոպական լրագրների շատ անգամ հաղորդած այն լուրին, թէ հաւանական է որ իրենք թիւրքերը միացած շարժումն գործեն սուլթանի դէմ։ Այդպիսի մի շարժումն վերին ատիճանի անհաւանական է թվում։ Ես երկու սուլթանների գահընկէց լինելը տեսել եմ, բայց իւրաքանչիւր անգամ մայրաքաղաքում յայտնի էր լինում որ այդ նպատակով հաստատուած կազմակերպութիւն կայ։ Այժմ, որքան ինձ յայտնի է, այդպիսի կազմակերպութեան ոչ մի նշան չկայ և ես նրա գոյութեան չեմ հաւատում։ Ի հարկէ Նորին Մեծութեան վարմունքի մէջ հայկական ռէֆօրմների խնդրում այնպիսի փոքան չկար, որի դէմ հանդէս գային իրեն թիւրքերը։ Տաճիկները իսկապէս չգիտեն թէ ինչու միայն բրիստոնեաների կեանքն է այդպիսի փոփոխութեանց ենթարկուում և թէ ինչու եւրոպական պետութիւնները չեն կարողանում պնդել որ բոլոր հայերների համար աւելի լաւ վարչութիւն ստեղծուի. ի զուր են նրանց ասում թէ Հայաստանում կատարուած անարդարութիւնները յատուկ դարմաններ են պահանջում։ Նրանք պատասխանում են թէ թիւրքերը նոյնպէս տանջւում են անարդարութիւնից և թէ պետութիւնները տաճիկների համար նոյնպէս մի որևէ բան պէտք է անեն։ Այս տեսակ վերաբերութիւնն արժէ լինեալ ունենալ իբրև մի նոր միջոց որ գործադրում է տաճիկ ազգաբնակութեան մի մասը։ Նրանք տեսնում են որ երկրում տիրող անարդարութիւնից իրերի վիճակից ազատուելու հնար չկայ։ Առաջին օրերում ամենքը, որոնք տաճիկների հետ հանդիպում են, նկատում են որ տաճիկներն սկսում են հարցնել, թէ արդեօք պետութիւնները չեն կարող այնպէս անել որ օգնեն թիւրքերին նոյնպէս, ինչպէս և բրիստոնեաներին են օգնում։

Տաճիկների այդպիսի վերաբերութիւնը պէտք է ինքատ առնել իրեն մի գործօն արևելեան հարցում։ Այդ փաստը թէ թիւրքերը պարզ յայտնում են իրանց դժգոհութիւնը և թէ ուրախութեամբ կոչջանէին եւրոպական միջամտութեան յօգուտ իրենց—ցոյց է տալիս թէ նրանց զգացումները դէպի կառավարութիւնը մեծ փոփոխութիւնների է ենթարկուել։

Տաճիկ հասարակութեան մի մասի մէջ եղեալ այդ զգացմունքը, որի մասին ես խօսում եմ, ոչ թէ նախանձ է եւրոպական միջամտութեան դէմ, այլ գժգոհութիւն է այն պատճառով, որ իրենք ևս չեն կարող օգուտել այդ միջամտութիւնից։

Տաճկական կարծիքների այդպիսի փոփոխութեան գլխաւոր պատճառները հետևում են վարչութեան փոփոխութիւնից, որին արագ ենթարկուում է Տաճկաստանը վերջին մի քանի տարիների ընթացքում։ Ժողովուրդը շարունակ խօսում է Դրան և Պալատի մասին, որոնք շարունակ հակառակ են միմեանց և որոնց մէջ շարունակ տարաձայնութիւններ են լինում և այդ տարաձայնութիւնները մեծ կապ ունին հայկական հարցի չվճռուելու հետ։

(Կը շարունակուի)։

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ

«Kölnische Zeitung» լրագրի թղթակիցը Կ. Պօլսից գրում է, թէ Ռուսիան և Ֆրանսիան պաշտօնապէս դեռ չեն միացել լորդ Սալիսբուրիի առաջարկին, որ եռապետական դաշնակցութիւնը հրաւիրում է մասնակցել Կ. Պօլսի հայկական ռէֆօրմների գործադրութեան վերահսկող մասնախմբին։ Միայն՝ հաւատացնում են, թէ նրանք խոստացել են միանալ։ Սուլթանը շարունակում է իւր յամառութիւնը։ Ասում են, թէ վերջերս նա յայտնել է, թէ աւելի շուտով ձեռք կը վերցնի իւր եւրոպական նահանգներից, քան թէ Ասիայում ունեցած իւր անկախութիւնը կը զոհի։

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Պետերբուրգից «Նով. Արօզրենիէ» լրագրին հեռագրում են, «Daily News»-ը իւր առաջնորդող յօդուածով յայտնում է, որ եթէ սուլթանը Հայաստանում ռէֆօրմներ չմտցնի, Անգլիական նաւատորմը Դարդանէլ կըմտնի և ռուսները կը գրաւեն Հայաստանը։ Կառավարական տիրան մի լրագրի յօդուածում ասում է, թէ կառավարութիւնը՝ հասարակական կարծիքի ճնշմանը ենթարկուելով, ցանկանում է ստիպողական միջոցների դիմել կամ պետութիւններին առաջարկել՝ ընդհանուր այժերով ճնշումն գործ դնել Դրան վրայ՝ հրապուրելով նրանց Թիւրքիան մաս մաս անելու մտքով։

ՀԵՐՔՈՒՄՆ

Լօնդոնի օսմանեան դեսպան Ռուսդէմ-փաշան յայտնում է, թէ իբ՝ Սալիսբուրիի հետ ունեցած տեսակցութեան առթիւ «Ռէյտէրի» հեռագիրը, որ պատճէնն է Թիւրքիայի արտաքին գործոց նախարարին ուղղած տեղեկութեան, ճիշդ չէ։

ԵՂԻԽԱՂԵՐ

Վիեննա 6 սեպտ.

Աւստրօ-Հունգարիայի արտաքին գործոց նախարարը Կ. Պօլսից պաշտօնական զեկուցումն է ստացել այն կոնֆերէնցիայի վերաբերութեամբ, որ տեղի է ունեցել աւստրիական դեսպանի և մեծ վէզիրի միջև։ Սայիդ-փաշան յայտնել է, թէ հայկական դիմիր մասնախումբը խորհուրդ է տալիս՝ Հայաստանի համար առաջարկուած ռէֆօրմները մտցնել ամբողջ Օսմանեան կայսրութեան մէջ և թէ սուլթանը տրամադիր է այդ առաջարկն ընդունելու։

Մինչև օգոստոս ամսի 26-ը Լօնդոնի «Հայերին օժանդակող ֆոնդը» հանգանակել է 4294 ֆնտ. ստ. 7 շիլ և 2 պ.։

ՔՆՆԻՉ ՄԱՍՆԱԽՄԲԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

«Ռէյտէրի» գրծ. հեռ.
Պետերբուրգ 6 սեպտ.

Հայկական քննիչ մասնախմբի կազմած զեկուցագրի մասին պետութիւններն այժմ տեղեկութիւն են ստացել։

Կենոչում (Պիսկոպոսին) կայացած միտինգի որոշումներ կը հաղորդենք հետեւեալ համարով։

ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՆ ՌԷՖՕՐՄՆԵՐԸ

«Ռուսաց գործակալութեան» վերջին հեռագիրը ցնծութեամբ ընդունուեցաւ ամեն շրջանում։ Լուրը կայծակի արագութեամբ թափանցեց հասարակութեան բոլոր խաւերը. «վերջապէս ռէֆօրմներն ընդունուեցան», ասում էին ամենքը և իրար շնորհաւորում։

Բայց հիմնաւոր է այդ ցնծութիւնը, ճշմարիտ ընդունուած են ռէֆօրմները։

Հեռագրական գործակալութիւնը յայտնում է, թէ Դուռը նոր զիջումներ է արել, ընդունել է պետութեանց առաջարկած էլի հինգ կէտերը. գործակալութիւնն աւելացնում է, թէ այդպիսով Դրան կողմից ընդունուած են ծրագրի ամենաէական կէտերը։

Նախ՝ ոչինչ հիմք չունինք հաւատալու, թէ այն կէտերը, որոնք ամենաէականն են գործակալութեան տեսակէտից, յիրաւի ամենաէականն են։ Ո՞վ գիտէ, գուցէ այդ կէտերը մեր տեսակէտից չընչին նշանակութիւն ունեցող բաներ են։

Եւ ապա մինչ է նշանակում՝ թէ զիջումներ է արել, էլի հինգ կէտեր է ընդունել։

Զիջումներ անելով և մի քանի կէտեր ընդունելով Դուռը չէ կարող գոհացնել հայերի արդար պահանջը, չէ կարող հանգստացնել քաղաքակիրթ աշխարհի յուզուած հասարակական կարծիքը։

Հայկական խնդիրն այժմ մի այնպիսի ընթացք է ստացել, որ իսկապէս հրապարակում այլ ևս հայկական խնդիր չէ դրուած, այլ երեք մեծ պետութեանց պատիւը, մանաւանդ Անգլիայի պատիւն ու քաղաքական վարկը։

Եթէ պետութիւնները կարողանան ներկայ ընթացքն և միանգամայն ծանր դրութիւնից դուրս գալ, եթէ Անգլիան յաջողութիւն ունենայ խնդիրն այնպէս վճռել, որ իւր քաղաքական վարկը չը կտրուի, ապա հայկական խնդիրը ևս գոհացուցիչ կերպով լուծուած կարելի է համարել։

Ներկայ բոլէում զիջումների և մի քանի կէտերի ընդունելութեան մասին խօսք լինել չի կարող, թէկն գուցէ Թիւրքիան դեռ շատ այդպիսի խաղեր խաղայ։ Եւ մինչ կէտեր են ընդունուած, որ «Էլի 5 կէտ» ընդունելով խնդիրը վերջացած համարուի։

Ցիշենք խնդրի մօտաւոր անցեալը։

Մայիսի 11-ին պետութեանց առաջարկած ռէֆօրմների ծրագրին Դուռը նախ բացէ ի բաց մերժողական պատասխան տուաւ։ Ապա մի նոր պատասխանով զիջումների լոսք շպատեց, յայտնեց՝ թէ սկզբունքով ընդունում է ռէֆօրմներ մտցնելու կարօտութիւնը և ցանկանում է, որ առաջարկուած ծրագրի զանազան կէտերը նորից քննութեան ենթարկուին. այսպիսով բանակցութիւնների դուռը բաց արաւ։ Թիւրքիայի վերջին, ընդարձակ պատասխանը, որին «Daily-News»-ի թղթակիցը «նախատրութիւններ» անունը տուաւ, մի մեծամիտ հեղնութեամբ քննում է պետութիւնների առաջարկած ռէֆօրմների ծրագիրը, հերքում է ծրագրի գրեթէ բոլոր կէտերը։

Այդ նշանաւոր պատասխանի մէջ գլխաւոր կոմիսարի մասին մի բառ անդամ չկայ։ Ըստ երևոյթին Դուռն այդ խնդիրը վերջացած էր համարում, լուռ կերպով ցոյց տալով, թէ Զաքիր-փաշայի նոր պաշտօնը համապատասխան է պետութեանց պահանջին։

Դուռը չէ ցանկանում, որ նահանգապետներն ու միթէսէրիֆները հինգ տարով ընտրուին, նաև բրիստոնեայ լինին կամ պետութիւնները դրանց հաստատութեան գործում veto-ի իրաւունք ունենան։

Ընտրութեան ամեն մի եղանակ վնասակար է համարում. պահանջում էր, որ պաշտօնեաները նշանակուին այնպէս, ինչպէս մինչև այժմ են նշանակուել և հին կարգը անփոփոխ մնայ...

Արդարադատութեան վերաբերեալ օրէնքները չէր ընդունում, երդուեալ դատաւորներ նշանակելը անօգուտ էր համարում, տեղական ոստիկանութեան կարևորութիւնը մերժում էր։

Գովում էր Թիւրքիայի բանտերը, և նրանց մէջ տիրապետող կարգերը, ասելով թէ նրանք համաձայն են օրէնքի և արդարութեան բոլոր պահանջներին։

Ապա Դուռը մի նեղբողեան էր կարդում քիւրդերի համար, իրան վիրաւորուած էր ցոյց տալիս, որ պետութիւնները նրանց թափառական են համարել. «քիւրդերն անմեղ մարդիկ են, որոնց կառավարութիւնը պէտք է պաշտպանէ»... (հայերի դէմ)։

Այդպէս և մերժում էր հայկական մասնախմբի կարևորութիւնը, որ Կ. Պօլսում պիտի լինի՝ Դրան կից, և վերահսկէ ռէֆօրմների գործադրութեանը։

Դրանցից յետոյ պետութիւններն իրանց ներկայացրած պահանջները չեն մեղմացրել՝ ռէֆօրմների ծրագրից այս կամ այն կէտը հանելով։ Եւ մեղմացնելն էլ անկարելի էր։ Պետութեանց պահանջը այնքան փոքր է, որ նրանից մի որևէ կէտ պակասցնելը կընշանակէր միջազգային օրէնքով վաւերացնել Թիւրքաց Հայաստանի արդի դրութիւնը և այնտեղ կատարուող սոսկալի գազանութիւնները։

Մի փոփոխութիւն է միայն եղել, և այդ յօգուտ հայկական դատի։ Մարքիզ

ՖԵԼԻԵՏՕՆ

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

(Ըստ Լեբրոկի)

Ցաջողութիւն և երջանկութիւն տարբեր գաղափարներ են։ Աշխարհիս երեսին անթիւ մարդիկ կան, որոնք երջանիկ լինելու համար ըստ երևոյթին ամեն ինչ ունին, երկնային ամեն բարիք, բայց և այնպէս դժբախտ են։ Բնութիւնը զոյութեան կռիւը յաջողութեամբ մղող մարդուն ամենաառատ շնորհներն է տալիս, բայց անկարող է երջանկացնել։ Երջանկութիւնը մարդու ներսինն է։ Մարդ ինքը միայն կարող է իրեն երջանիկ դարձնել։ Եւ եթէ հոգին թափուր է երջանկութեան տարրերից, ապա մարդուս ոչինչ չի կարող երջանկացնել՝ ոչ գեղեցկութիւնը, ոչ երկրային բարիքները ու ճոխութիւնները։

Բաղմաթիւ են այն մարդիկը, որոնք հէնց իրանց ծննդեան օրից փուչ ու տատասկ են կոխ տալիս, ծանր լուծ են կրում։ Եւ այդ մարդիկը միայն ադքատ դասակարգի մէջ չեն։ Հարուստները եթէ շատ չէ, ադքատներից քիչ չեն չարչարուում։ Որքան են այն հարուստները, որոնք ոչ քուն ունին, ոչ հանգստութիւն և ոչ հոգու խաղաղութիւն։ Անկարելի է աշխարհի երեսին ապրել, և գէթ չը-թունքով թշուառութեան բաժին չմօտենալ. բայց կարելի է թշուառութիւնից բարձրանալ, նրան յաղթել։ Դրա համար հարկաւոր է մեր մտաւոր աշխարհը գեղեցիկ տպաւորութիւններով և փայլուն յիշողութիւններով հարստացնել։

Ամեն մարդ ցանկանում է երջանիկ լինել. բայց սակաւ են այն մարդիկը, որոնք կարողանում են կարգին ապրել, կեանքի քաղցրութիւններն զգալ, հասկանալ։

Փորը արգելքները, անհամոյ դէպքերը մեծ թշուառութիւններ են համարուում։ «Ոչինչ թշուառութիւն չկայ այն մարդու համար, ասում է Կիկերոնը, որ հասկացել է յաւիտենականութեան իմաստը»։

Ցաճախ մեր մտքի վրայի շնչին բշտիկը մահացու վէրք ենք համարում։

«Այն մարդը, որի առջև բաց են դռուութեան սահարի դռները, կամ որի միտքը շատ թէ քիչ ընդունակ է մտածելու, իրեն շրջապատող իրերի մէջ միշտ հետաքրքրութեան անսպառ աղբիւր կը գտնի, ահա բնութեան երևոյթները, գեղարուեստի արդիւնքները, բանաստեղծութիւն, պատմութիւն, նշանաւոր մարդկանց կենսագրութիւն, գալոց սերունդների վիճակ և այլն, և այլն։

Մեր աշխարհը լիքն է ծաղիկներով, ծառերով, խոտով, գետերով, լճերով, ծովերով և լիճներով. դրանք լուսաւորուած են արևի պայծառ ճառագայթներով։ Բայց այդ ամենը գին ունին միայն նրանց համար, որոնք զարգացած ճաշակ ունին։ Կենդանին էլ այդ հրաշալիքների մէջ է ապրում, բայց ոչինչ չեն հասկանում։ Ջան համար մի ոսկը լաւ է, քան վարդակարմիր առաւօտը։

Ո՛չ հարստութիւն և ոչ բարձր դիրքը կարող են մարդուն երջանիկ դարձնել։ Կարող է մարդ կուշտ և հարուստ լինել, բայց եթէ չէ սիրում իւր եղբօրը, իւր մերձաւորին, եթէ անձնազոհութեան պատրաստ չէ, սրտում սէր չկայ և հոգու մէջ խաղաղութիւն՝ ապա նա չէ կարող երջանիկ համարուիլ։

Երջանկութիւնը ծախու ապրանք չէ. և փողով կարելի չէ այն գնել. այդպէս էլ երջանկութիւնը այժից և իշխանութիւնից չի կախուած։ Կայսրների թագերը միայն վարդերից չէ հիւսուած։

Ամեն ինչ որոշ օրէնքներով է դեկավարուում. և եթէ մենք տանջւում ենք, այդ մեր յանցանքն է և ընդհանուր բարօրութեան համար է։ «Չկայ այնպիսի պարտականութիւն, ասում է Սենեկան, որի կատարումը մարդուս աւելի չերջանկացնէր, և չկայ այնպիսի փորձութիւն, որից անկարելի լինէր խուսափել»։

Էպիկուրն ասում էր՝ ամեն մի մարդ երեք տեսակ ցանկութիւն ունի. առաջինը՝ բնական և անհրաժեշտ ցանկութիւններ. երկրորդը՝ բնական և ոչ անհրաժեշտ, երրորդը՝ անբնական և ոչ անհրաժեշտ ցանկութիւններ։ Անհրաժեշտ ցանկութիւններին հեշտ է գոհացում տալ, ոչ անհրաժեշտ, բայց բնական ցանկութիւններին՝ նոյնպէս. դրանց գոհացում տալու համար ինքը բնութիւնը միջոցներ է տուել։ Բայց անբնական, անմիտ ցանկութիւնների գոհացում տալը կապուած է դժուարութիւնների ու ծանր հետևանքների հետ, դրանց համար չափ ու սահման չկայ։

Կեանքի քաղցրութիւնները վայելելու համար՝ մենք շատ բանից պէտք է հեռանանք և շատ բան զոհենք։ Ինքնազոհութիւնը յաճախ ամենամեծ հաճոյք է պատճառում։ Մեր զգացմունքներն էլ հաճոյքների աղբիւր են. բայց եթէ մի անգամ անձնատուր եղանք զգացմունքներին, կարող ենք կեանքի յարձանքների մէջ խեղդուիլ։

Որևէ գործ յաջողութեամբ կատարելու համար հարկաւոր չէ շատալեզ. խորհելու համար ժամանակ և հոգու խաղաղութիւն է պէտք։

Ամենքը կարիք ունին ներքին հանգստութեան և անդորրութեան. սրանց և մարքին էլ անդորրութիւն է հարկաւոր։ Ամենքը պէտք է աշխատութեանց մէջ խաղաղ, ամուր, ինքնուրոյն, անկախ և անձնազոհութեան պատրաստ բնաւորութիւն մշակեն։ Պէտք է աշխատել մի այնպիսի բնաւորութիւն կազմակերպել, որ փախուստ տայ ոչ միայն աւելորդ կերուխումից, այլ և վատ զգացումներից, ցանկութիւններից, մտքերից և գործերից։

Եւ մենք կարող ենք այդպիսի մի իդէալի հասնել. դա մեր ոյժից վեր գործ չէ։

Ամեն օր գանգատում ենք, ամեն օր նորանոր կարիքներ ենք յայտնում. կամ մեզ պաշտօն է հարկաւոր, կամ փող, կամ մեծ մարդկանց բարեկամութիւն։ Բայց ով է մտածում հոգեկան անդորրութեան մասին։

Երկու ճանապարհ կայ, որոնցով կարելի է հոգու անդորրութիւն ձեռք բերել. մէկը ամբողջովին մեր ձեռքին է. հարկաւոր է բարձր մտքերից և վեհ զգացմունքներից մի բոյն շինել և մէջն ապրել։ Ո՛չ ոք չէ խմանում, որովհետև այդ բանը չեն սովորեցրել, թէ ինչպիսի կախարդական ամրոցներ կարելի է կառուցանել գեղեցիկ մտքերից։ Այդ ամրոցները կարող են բոլոր բոլոր հարուածներից ազատ պահպանել մեզ։ Հոգսեր, տանջանքներ, թշուառութիւններ չեն կարող նրանց կործանել։ Ամեն բանից կարող ենք զրկուել, բայց նրանցից՝ երբէք։ Որովհետև բարձր մտքերի և վեհ զգացմունքների շէնքը մարդկային ձեռքի արդիւնք չեն։

Ինչ աւելի մեծ փորձութիւններ ու նեղութիւններ կարող են հասնել մեզ, քան այն, որ Ցիսուսին բաժին ընկան. բայց նա երբէք չվրդովուեց, երբէք չյուզուեց, երբէք չարտնջաց, որովհետև հոգին խաղաղ էր և խիղճը հանգիստ. նրա իւրաքանչիւր քայլը խրճի թելադրութիւնն էր։ Մարդկութեան վերաբերութեամբ նա որոշ պարտականութիւններ էր յանձն առել և այդ պարտականութիւններն էր կատարում հանգիստ հոգով։ Այդտեղ էր նա տեսնում Իւր երջանկութիւնը, ուստի և արտաքին աշխարհի չարութիւններին ուշ էլ չէր դարձնում։

Արտաքին իրերը մեզ երջանկացնել չեն կարող. երջանկութիւնը մեր մէջ, մեր ներքին աշխարհում պիտի որոնենք։ Հին աշխարհի իմաստունը Դրեսսին երջանիկ չհամարեց, թէկն նա իւր անթիւ գանձերն էր ցոյց տալիս. և ընդհակառակը նա երջանիկ անուանեց մի հասարակ քաղաքացու, որ հայրենիքի պաշտպանութեան համար զէնք էր առել իւր որդոց հետ և պատերազմի դաշտում ընկել։ Հպարտութիւնը, ագահութիւնը, հալածանքը յաճախ ամենամեծ հաճոյք է պատճառում։ Մեր զգացմունքներն էլ հաճոյքների աղբիւր են. բայց եթէ մի անգամ անձնատուր եղանք զգացմունքներին, կարող ենք կեանքի յարձանքների մէջ խեղդուիլ։

Որևէ գործ յաջողութեամբ կատարելու համար հարկաւոր չէ շատալեզ. խորհելու համար ժամանակ և հոգու խաղաղութիւն է պէտք։

Ամենքը կարիք ունին ներքին հանգստութեան և անդորրութեան. սրանց և մարքին էլ անդորրութիւն է հարկաւոր։ Ամենքը պէտք է աշխատութեանց մէջ խաղաղ, ամուր, ինքնուրոյն, անկախ և անձնազոհութեան պատրաստ բնաւորութիւն մշակեն։ Պէտք է աշխատել մի այնպիսի բնաւորութիւն կազմակերպել, որ փախուստ տայ ոչ միայն աւելորդ կերուխումից, այլ և վատ զգացումներից, ցանկութիւններից, մտքերից և գործերից։

Եւ մենք կարող ենք այդպիսի մի իդէալի հասնել. դա մեր ոյժից վեր գործ չէ։

Ամեն օր գանգատում ենք, ամեն օր նորանոր կարիքներ ենք յայտնում. կամ մեզ պաշտօն է հարկաւոր, կամ փող, կամ մեծ մարդկանց բարեկամութիւն։ Բայց ով է մտածում հոգեկան անդորրութեան մասին։

Երկու ճանապարհ կայ, որոնցով կարելի է հոգու անդորրութիւն ձեռք բերել. մէկը ամբողջովին մեր ձեռքին է. հարկաւոր է բարձր մտքերից և վեհ զգացմունքներից մի բոյն շինել և մէջն ապրել։ Ո՛չ ոք չէ խմանում, որովհետև այդ բանը չեն սովորեցրել, թէ ինչպիսի կախարդական ամրոցներ կարելի է կառուցանել գեղեցիկ մտքերից։ Այդ ամրոցները կարող են բոլոր բոլոր հարուածներից ազատ պահպանել մեզ։ Հոգսեր, տանջանքներ, թշուառութիւններ չեն կարող նրանց կործանել։ Ամեն բանից կարող ենք զրկուել, բայց նրանցից՝ երբէք։ Որովհետև բարձր մտքերի և վեհ զգացմունքների շէնքը մարդկային ձեռքի արդիւնք չեն։

Ինչ աւելի մեծ փորձութիւններ ու նեղութիւններ կարող են հասնել մեզ, քան այն, որ Ցիսուսին բաժին ընկան. բայց նա երբէք չվրդովուեց, երբէք չյուզուեց, երբէք չարտնջաց, որովհետև հոգին խաղաղ էր և խիղճը հանգիստ. նրա իւրաքանչիւր քայլը խրճի թելադրութիւնն էր։ Մարդկութեան վերաբերութեամբ նա որոշ պարտականութիւններ էր յանձն առել և այդ պարտականութիւններն էր կատարում հանգիստ հոգով։ Այդտեղ էր նա տեսնում Իւր երջանկութիւնը, ուստի և արտաքին աշխարհի չարութիւններին ուշ էլ չէր դարձնում։

Արտաքին իրերը մեզ երջանկացնել չեն կարող. երջանկութիւնը մեր մէջ, մեր ներքին աշխարհում պիտի որոնենք։ Հին աշխարհի իմաստունը Դրեսսին երջանիկ չհամարեց, թէկն նա իւր անթիւ գանձերն էր ցոյց տալիս. և ընդհակառակը նա երջանիկ անուանեց մի հասարակ քաղաքացու, որ հայրենիքի պաշտպանութեան համար զէնք էր առել իւր որդոց հետ և պատերազմի դաշտում ընկել։ Հպարտութիւնը, ագահութիւնը,

---

ԹՈՒՇԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

„Народное образованіе есть вопросъ жизни и смерти для государствъ нашего вѣка и...величіе современныхъ державъ зависитъ отъ числа грамотныхъ болѣе, чѣмъ отъ числа солдатъ“.

Кн. Васильчиковъ.

Դարուս վերջի քառորդի կարևորագոյն էական հարցերից մինը, որով զբաղուած է ռուս մամուլը, անկասկած ժողովրդի կրթական գործն է, որի յաջող լուծումից է կախուած պետութեան ընդհանուր բարոյականութեան և նիւթական յառաջադիմութիւնը և նոյն իսկ նրա ինքնապահպանութեան հիմքը։

Այս հարցը, որ իւր վրայ է դարձրել տարբեր ուղղութեանց պատկանող ռուս հրապարակախօսների միտքն ու ուշադրութիւնը, կատարելապէս արժանի է բազմակողմանի հետազօտութիւնների։ Այդպիսով հաւանօրէն ընդհանուր կարծիքներ կը կազմուին, և հարկաւ այն ժամանակ հնարաւոր է սպասել նրա կանոնաւոր լուծումը։ Բայց առ այժմ անհասկանութիւնը խանգարում են մեր երջանկութիւնը։ Եթէ կարողացանք զբանց յաղթել, խղճի և առողջ բանականութեան ձայնին լսել, կատարելութեան ձգտել և մեր բարոյական նպատակներին ուղղութեամբ ձգտել, ապա ուրեմն երջանիկ ենք։

Սիւնի։

ԹՈՒՇԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

„Народное образованіе есть вопросъ жизни и смерти для государствъ нашего вѣка и...величіе современныхъ державъ зависитъ отъ числа грамотныхъ болѣе, чѣмъ отъ числа солдатъ“.

Кн. Васильчиковъ.

Դարուս վերջի քառորդի կարևորագոյն էական հարցերից մինը, որով զբաղուած է ռուս մամուլը, անկասկած ժողովրդի կրթական գործն է, որի յաջող լուծումից է կախուած պետութեան ընդհանուր բարոյականութեան և նիւթական յառաջադիմութիւնը և նոյն իսկ նրա ինքնապահպանութեան հիմքը։

Այս հարցը, որ իւր վրայ է դարձրել տարբեր ուղղութեանց պատկանող ռուս հրապարակախօսների միտքն ու ուշադրութիւնը, կատարելապէս արժանի է բազմակողմանի հետազօտութիւնների։ Այդպիսով հաւանօրէն ընդհանուր կարծիքներ կը կազմուին, և հարկաւ այն ժամանակ հնարաւոր է սպասել նրա կանոնաւոր լուծումը։ Բայց առ այժմ ան-

Սօլզբերիին իմաստուն հեռատեսութեամբ պահանջից, որ Կ. Պոլսում հաստատուելի մասնախմբի անդամներից երեքը Հայաստանի համար ռէֆօրմներ պահանջող պետութեանց ներկայացուցիչները լինին։

Այս ամենից յետոյ ինչ 5 կէտեր են, որոնց ընդունելութեամբ կարող է վերջացած համարուել ռէֆօրմների խնդիրը։

Պետութիւնների կողմից ուլտիմատում չի ներկայացրած Օսմանեան կառավարութեանը. բայց չի ներկայացրած պաշտօնապէս։ Իսկ իրերի ընթացքն ինքն իրան առաջ է բերել այդ ուլտիմատումը։ Խնդիրը չափազանց սուր կերպարանք է ստացել։ Կամ Թիւրքիան պէտք է անպայման կերպով ընդունի առաջարկուած ռէֆօրմներն ամբողջապէս՝ հանդերձ Եւրոպական վերահսկողութեամբ և կամ հայկական խնդրում դաշնակից պետութիւնները պէտք է մի կամ մի քանի քայլ յետ դնան՝ Թիւրքի յամառութիւնից յաղթուելով։

Վերջին դէպքը՝ այսինքն պետութիւնների յետ գնալը, չի կարող տեղի ունենալ։ Մէջ է բերուած ամենքի, և մանաւանդ հպարտ Ալբիոնի պատուի խնդիրը։ Մնում է մի այլ դրութիւն. կամ Թիւրքիան պէտք է պետութեանց պահանջները ամբողջապէս կատարէ և կամ օրհասական կռիւ մղելով իւր ճակատագրի հարուածների դէմ, քաջքայլի, ոչընչանայ։

Ընչին զիջումներով Թիւրքիան չի կարող մօտալուտ վտանգի առաջն առնել։ Բպդի բերմամբ՝ քաղաքակիրթ աշխարհի մի անկիւնում հաստատուած լինելով, նա կարող է փրկուել, եթէ ընդհանուր յառաջադիմութեան և մարդասիրութեան սկզբունքները իւր պետական կազմուածքին պատուաստէ ու քաղաքակիրթ աշխարհի կարգերին հետևի։ Ապա թէ ոչ՝ նա պէտք է բոլորովին ընկնի։

Թիւրքիայի ԺԹ-րդ դարու պատմութիւնը օսմանեան պետութեան ստիճանաբար անկման պատմութիւնն է. նա կանգնել է մի զառիվայրի վրայ, որտեղից անդադար ցած է գլորւում։ Նա կորցրել է իւր սեպհական շահերը հասկանալու ընդունակութիւնը, իւր գոյութեան յենակէտը ճանաչելու և պաշտպանելու կարողութիւնը. նա չէ կարողանում նոյն իսկ իւր բարեկամին ճանաչել, որի բարեկամական խորհուրդը թշնամական ցոյց է համարում։

Վաղուց ընկած կլինէր Թիւրքիան, բայց այդ անկման առաջը կարգեցին եւրոպական պետութիւնները՝ զանազան դաշնագիրներ կնքելով և օսմանեան պետութեան քայքայուած չէնքին նեցուկ տալով։ Բայց Թիւրքիան այդ նեցուկներից անդամ չկարողացաւ օգտուել։

Դրանք վատ նշաններ են. դրանք ցոյց են տալիս, թէ մեր առաջը կանգնած է մի պետութիւն, որի ներքին, կենսական ոյժերը սպառուած են, որին պատմական օրէնքը կործանուելու է դատապարտել։

Թերևս Թիւրքիան կարողանայ վրանգը հեռացնել. թերևս նա ոյժ և քաջութիւն ունենայ մահից ազատուելու և դարձեալ՝ թէպէտև հիւանդ՝ ապրելու։ Հէնց այդ նպատակով էլ Եւրոպան նրան դեղ է նշանակել։

Եւ այդ դեղն է Հայաստանի ռէֆօրմները ամբողջապէս ընդունել՝ հանդերձ եւրոպական վերահսկողութեամբ։

Իսկ զիջումները, մի քանի կէտեր ընդունելը՝ ոչ Հայաստանում գործուող չարագործութիւններին վերջ կը դնեն, ոչ Եւրոպային կը դոհացնեն և ոչ օսմանեան պետութիւնը վտանգից կազատեն։

Եւ հէնց այդ է պատճառը, որ վերջին հեռագիրը միայն Կ. Պոլսից է գալիս, «Ռուսաց» գործակալութեան միջոցով, իսկ Լօնդօնից ոչինչ տեղեկութիւն չկայ։ ճ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի քաղաքային խորհուրդը երկուշաբթի օրուայ նիստում սահմանեց բողոքել կառավարիչ սենատին այն վճռի դէմ, որով Թիֆլիզի քաղաքային դպրոցները համարվում են հասարակական և ոչ մասնաւոր։

* * *

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 4 թուով.

«Անհամեստաստ աղբիւրից լուր հասաւ այստեղ, թէ Երիզայում անտրեկիշները մի մատնիչ են վերաբերել գնդակի հարուածով։ Դժբաղդաբար վէրքը մահացուցիչ չէ։ Մատնիչը ընիկ երիզցի Արմենակ Աղաբէարեան ազգանունով մի երիտասարդ է, մօտ 35 տարեկան։ Եթէ այդ վատ, անարժան հայը իմ ճանաչածս է, նրան երբ 1892 թուին իբրև քաղաքական յանցաւոր չլմայակալ Յոսպէ բերին, նոյն ժամանակ ես Սուրիայումն էի գտնվում։ Թշուառականը, որ երբեմն Երուսաղէմայ վանքում ծառայած էր, կարեկցութիւն դատ Յոսպէի ժողովրդի կողմից։ Նորա յիշելով արտրայանի նախածառայութիւնը և վանքի տաղը ուտելը, չէին կարող ի հարկէ կասկածել, որ այդ թշուառը մի տարտփելի դիտաւորութիւն յաջողեցնելու համար յանձն էր առած այդ տանջանքը։ Խեղճ և միամիտ ժողովրդի զուարթը շարժուեց։ Նա ի սէր ազգի չարչարողին օգնելը արդարան պարտք համարելով իւր սեպ միջոցներով հանդանակեց Նորա համար մի քանի ոսկի և տուաւ նորան, որպէսզի գէթ նիւթապէս չճնշուի։

Այդ եղելութիւններից մի քանի օր յետոյ յանկարծ նա, որ ըստ երևոյթին քաղաքական մի ծանր յանցաւոր էր համարուում, տասնց չլմայի և ոստիկանների հսկողութեան, Երուսաղէմայ ս. Յակոբայ վանքից ներս մտաւ և ամենաջերմեռանդութեամբ սկսաւ համբուրել պատերն ու արտասուաթոր աչքը ողօթել։ Այս ձևերով ահա նա, որ մինչև այդ ժամանակ ամենաղղուելի էր թվում միաբանն հոգևորականների աչքում, սիրելի դարձաւ նոցա և համարեա ամբողջ ժողովուրդին։ Եթէ իսկապէս այս այն խորամանկ և նուրբ խաչագող Արմենակն է, ափսոս, որ մի ուրիշ գնդակ ևս չի յաջողել երկրորդին, որ այլևս մահից վրիպելը անհնար լինէր...»

* * *

ԲԱԳՈՒՄԻՑ մեզ հաղորդում են, թէ Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեհաճել է հրամայել, որ սեպտեմբեր եկեղեցական-ծխական տարեշրջանի սկզբից դպրոցի աւագ-ուսուցիչ պ. Ա. Գալստեանը շարունակէ իւր պաշտօնը։

* * *

ՍԱՆԱՀՆԻՑ մեզ գրում են.

—Հարազատի քոյն ձորային մասը շատ շոք է, հետևապէս և յարմարաւոր՝ շոք կլիմայ սիրող պտուղների համար։ Այս պատուական դրութիւնից օգտուելով Սանահնի վանահայրը Երևանից գիտակ թաթեր բերել տալով, ընդարձակ տարածութեամբ, վանական հողերում, առաջին անգամ ցանել է տուել ձմերուկ, սեխ, դդմայ (Երևանի տեսակ) և բամբակ. բոյսերի աճումն սքանչելի է. եկող տարուանից պիտի ցանել տայ և բրինձ։ Այս դէպքը մեզ Հորդաստանցիներիս համար կարևոր է և խրատական։ Ցանկալի կը լինի, որ այստեղի գիւղացիները ևս օրինակ առնեն և սկսեն այդ տեսակ պրտուղների մշակումով զբաղուել։ Հորեռում շատ ճարտեր կան բոլորովին ամայի մնացած, որոնք վերոյիշեալ զբաղմանց համար միակ յարմարաւոր տեղերը կը համարուին։

* * *

ՀԱՂԲԱՏԻՑ մեզ գրում են.

—«Արձագանքի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ Հաղբատ գիւղից մինչև Սաբը-խաչ դուռը պատուական սոյլի ճանապարհ է շինում կալուածատէր Իշխան Բարաթովը. այժմ այդ ճանապարհը փորելիս բաց է եղել առատ և ընդարձակ տարածութիւն բռնող «ա ե ր կ ա թ ա փ ա յ լ» (желѣзный блескъ)։ Դեռ գետնի երեսին շատ առատ է երևում, այն էլ հերաերով. ենթադրում են, թէ որքան խորը փորուի, այնքան հարուստ կը լինի։

* * *

ՋՈՒՋՈՒՑ.—Խնդիր է ներկայացրած ուր հարկն է՝ մի նոր դպրոցի թոյլատրութեան համար։ Այդ դպրոցը պէտք է աշակերտներ պատրաստէ ռէալական և միւս ուսումնարանների համար։ Քաղաքումս թէև բաւականաչափ դպրոցներ կան, բայց և այնպէս բազմաթիւ մանուկներ դուրսն են մնում, որովհետև բաց տեղեր չկան։ Հայր Սաթունեանը որոշել է բոլոր եկեղեցիներին կից ծխական միդասեան դպրոցներ բանալ։

* * *

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են.—Երիտասարդների մէջ տարածուած է հարբինք հիւանդութիւնը, որ մեծ կոտորած է անում. նոյն հիւանդութիւնը տարածուած է և մեծերի մէջ, բայց վնաս չէ տալիս։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Խնամարհաբար խնդրում եմ «Արձագանք» լրագրի մարձակայ համարներից մէկում շնորհ անել հրատարակել ի գիտութիւն Վրաստանի և Իմերէթի հայ դպրոցական պաշտօնեաների, որ, ինչպէս հեռագրով ծանուցանում է ազգիս Վեհափառ Կաթողիկոսի Դիւանը, Նորին Սրբութեան բարեհաճութեամբ՝ պ. Ա. Քիշմիշեանի՝ «Բուսաբանութեան» և պ. Յ. Ճաղարբէգեանի՝ «Հայոց լեզուի» ձեռնարկներն ընդունուած են մեր դպրոցներում գործադրուող դասագրքերի թըւում։

Թեմական տեսուչ՝

Մեսրոպ քահանայ Մելեան։

4 սեպտ. 1895 թ.

Թիֆլիզ։

* * *

Խուդավենդիգեարում օգոստոսի 9-ից մինչև 18-ը խօլերայով հիւանդացել են 72 հոգի, մեռել են 43. Հալէպի վիլայէթում օգոստոսի 8-ից մինչև 18-ը հիւանդացել են 45, մեռել 22. Աղանայի վիլայէթում օգոստոսի 8-ից մինչև 15-ը հիւանդացել են 3, մեռել 4, Տիգրանակերտի գաւառում օգոստոսի 1-ից մինչև 18-ը հիւանդացել են 95, մեռել ըն 113. Կոնիայի վիլայէթում օգոստոսի 9-ից մինչև 16 ը հիւանդացել են 7 հոգի և մեռել 6։

* * *

Այս օրերս պաշտօնական գործերով ուղևորվում է Կովկաս Մոսկուայի և Բոստովի վրայով բանտային վարչութեան գլխաւոր կառավարիչը։ Պ. գլխաւոր կառավարչի ուղևորութեան ճանապարհն է—Սրմաւիր գիւղ, Պետրովսկ քաղաք, Վլադիկավկազ, Թիֆլիզ, Բաթում, Նովորոսիսկ, Եկատերինոդար, Կուրշ, Թէոդոսիա, Սեվաստոպոլ, Սիմֆերոպոլ և ապա յետ Պետերբուրգ։

* * *

ՄԻ ԲԻԾ, ՈՐ ՊԼՏՔ Է ՍՐԲՈՒԻ

—

«Սորանից ութն ամիս առաջ ս. Էջմիածին եկայ և ողջունեցի ձեզ. յետոյ ուղևորուս Ռուսաստան գնացի. Նորին Կայսերական Մեծութեան շնորհացն արժանացայ. գոհութիւն Աստուծոյ՝ ազգիս բաղձանքն կատարուած վերադարձայ. և ահա կրկին կ'ողջունեմ ձեզ, ժողովուրդ հայոց»։

Եթէ «Վէրք Հայաստանի» վիպասանութեան հեղինակը իւր գերեզմանից վեր կենար և նշմարէր այն լոյսը, որ ծագում է ողբացեալ եղբայրների համար, ո՜հ, ինչպէս պիտի թնդար իւր սիրտը, որ թրթռացել է ոչ միայն Քանաքեռի համար, ոչ միայն Երևանի, այլ ամբողջ գերեցած ազգի համար։ Նա կը տեսնէր, որ իւր հետ նորոգուել են և իւր քաղաքացիք։ Զանգուի ափին էլ մի շիրիմ կը տեսնէր, որ իւր քաղաքացիք կանգնեցրել են նորա ամիսի վրայ, իբրև նշան երախտագիտութեան. նա կը տեսնէր մի նոր սերունդ, որ իբրև նոր Խաչատուրներ, գիտեն մոռանալ մանր կռիւներ, երկպառակութիւն, քէն և նախանձ—ի սէր ընդհանրութեան...

Եւ մինչդեռ նա գրիչ կը վերցնէր, որ այժմ դրէ ոչ «Վէրք»—այլ «Բժշկութիւնք հայաստանի», յանկարծ իւր ականջին հասնէր Մեծ Հայրապետի դառն յանդիմանութիւնները իւր քաղաքացիներին ուղղած... «Սիրելիք, Երևանից շատ անախորժ լուրեր կը լսեմ». «Ցաճկատանում մարդիկ բանտերի մէջ կը մաշին, շատերը մատնութեան կը զոհուին... դուք ալ այսպէս կուսակցութիւն կը սիրէք». «Մատն իւր կոտորածով անուն ժառանգեց, իսկ ձեր կոտորածը բարոյական է. ազգի տունը, ձեր տունը կը քանդէք». «Մարդիկ կան, որ թէև կենդանի են, բայց մեռած են բարոյապէս». «Ձեզի զարգացած կը համարէք, բայց դեռ տհաս էք». «Ի՞նչ մի երեւելի գործունէութիւն ունիք արած». «Ինչու Հայրիկին լոյս Ցաճկատանի խորքերը կը թափանցէ, Ռուսաստանի ազգայնոց սիրտ կը լուսաւորէ, ձեզի համար լոյս պակաս է». «Երեւանից նանակ կը ստանամ՝ անստորագիր». «Սիրելիք, անխղճութիւն մի՛ ընէք». «Զրպարտունքս անթիւ են, թողէք, որ քիչ մը հանգիստ լինիմ՝». «Նոր-Նախիջևան մի գիւղ տեսայ, որ 500 անից բաղկացած էին». «Նրանք ձեզնից ուելի կը թեռուած էին». «Մինէ արժէ՞, որ էջմիածնից ձեր Կաթողիկոսը դայ այստեղ դպրոցական հոգսերը հոգալու». «Դուք ալ դիս այնպէս կը բեռնէք խաչի վերայ»։

Խեղճ ուրուական, որքան պիտի տանջուիս գետնի տակ, երբ որ քո բաղաքացիք այսպիսի յանդիմանութիւններ են լսում գետնի երեսին։ Ինչ փայտէ նեարդեր պիտի ունենան նոքա, որոնք որ այսպիսի զուսն ճշմարտութիւններով փաւաւորուել են, եթէ տեղն ու տեղը դեռևին չմտան ամօթից և խղճահարութիւնից։ Այս բիծը կը մնայ. քաղաքի զուներն սև տախտակի վրայ կը դրոշմուի Աբովեանի անարժան ժառանգների նսեմ փառքը։

Երևանցոց խայտառակութիւնը առաջ է եկել իրանց դպրոցների անկարգութիւնների պատճառով։ Մի տարի առաջ Երևանի միջոցները նոյնն էին, ինչ որ այժմ. ինչու՞ այն ժամանակ նոյն անկարգութիւնները չկային, որի լուսն այժմ ամենուրեք տարածուել է։ Մի տարի առաջ յանուն ժողովրդեան խօսող և պրդտաց ջրի մէջ ձուկ որսացողները պահանջում էին, որ առաջնորդը փոխուի և տեսուչը արձակուի. իրանց բախտը բանեց, այնուհետև տեսուչը հեռացաւ, իսկ առաջնորդը ի Տէր հանգիստ. բայց ուր է դեմագոգների խոստացած բարեկարգութիւնը, և ընդհակառակ, ինչից է ծագում անկարգութիւնը...

Առաջնորդել սիրում են, միայն թէ իշանութիւն տուէք բանեցնելու և փոր—անօրինելու. բայց երբ որ մի վանդգայ, երբ որ մի կարիք լինի, առաջնորդները իրանք ամենից առաջ փախուստ են տալիս և գիւղացիներին թողնում են, որ անառաջնորդ ինչ ուզենան անեն։ Այնուհետև արտաւարութեան բիծը որքան էլ սև լինի, փոյթ չէ իրանց համար. դոքա պատասխանութիւն չունին։ Երբէք չեն աշխատի բիծը սրբել. ադտի մէջ թաւալելը—հանգստութիւն է նոցա համար։ Աշխատանդ որ իրանք ինչ են տուժում. տուժում է անմեղուն ժողովուրդը, որից որ և՛ իշխանութիւն և՛ փող են ստացել հաւատարմաբար։

Ուրեմն դարձեալ ինքը ժողովուրդը պիտի հոգայ ուղղել ամեցած սխալը։ Մինչև այժմ ժողովուրդը իւր քուէն տալ է մտաւոր սինքսրին, իւր բախտը նոցա ձեռքումն է թողել, շարժուել է նոցա խելքով և նուիրական հաստատութիւնները քանդել է, երբ որ իրան հաւատացրել են, թէ գործը շինվում է։ Քուէն խաղ ու հանք է դարձել, բայց ծանր հետևանքներ է ստեղծում։ Մի մարդ, որ մոմավաճառութեան հաշիւը տարիներով գաղտնիք է պահում. մի մարդ, որ դպրոցի վարիչի պարտքը չի վճարում, պատճառելով թէ տեսուչը իւր ուզածը չէ. մի մարդ, որին ոչ ոք իւր անձնական դատը չի վստահանայ յանձնել, որ դատարանում պաշտպանէ, ահա—սոցպէխներն են ստանում քուէ, որ դան և տնօրինեն ժողովրդեան գործերը։ Ինչ ասել կուզէ, որ դոքա՝ բանի տեղ դրուելով՝ պէտք է սկսեն իրանց գժութիւնները, և յիրաւի, գործում են ամենայն քմահաճութեամբ և խիղախութեամբ։ Այսպիսիների համար եկեղեցու տեղից խրատը նոյնն է, թէ գայլի գլխին Աստուածը։ Ուրեմն դարձեալ կրկնում եմ, ժողովուրդն ինքը պէտք է դարմանէ իւր ցաւը. ընտրութեանց ժամանակ՝ պիտակցութեամբ պէտք է տայ իւր քուէն։

Բայց ոչ այսքան միայն. ընտրութիւնն էլ պէտք է շենշուի եւ շխարդախուի։ Եթէ ժողովրդեան շնորհած է ընտրելու ազատութիւն, արդեօք ազատ-հոգմ՞ է նա ճնշումից և խարդախութիւնից։ Պատասխանում ենք. Ո՛չ, և դարձեալ ոչ։

Ապա ուրեմն, ճնշուած և խարդախուած ընտրութեանց զոհերի թիւը հետզհետէ նուազցնել,—այս էլ մի հոգ է, որ պիտի հոգան նոքա, որոնք իշխանութիւն ունին։ Մեր ներքին գործերի մէջ մեծագոյն խնդիրը—գուցէ հէնց այս է։ Ընտրութեան բանաբարութիւնն է, որ ամենայն չարիք ստեղծեց։

Ուսուցիչ։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒԷ, 22 օգոստոս.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Ահա ազգայնոյս տեղւոյս անգլիական փոխ-հիւպատոս պ. Համպսօնին մի առանձին արձանագրութեամբ և վաւերացրած երեք անձանց ստորագրութեամբ, որոնք մասնակցել էին այդ հանդիսաւոր առաւօ-դաֆէին։

Այն գլխում, թէ «Ի՞նչ է կարդում ռուս հասարակութիւնը», պ. Ստարոնովսկիի վիճակագրութեամբ յառաջ են բերած այլ անմիտիթար տեղեկութիւններ բարձրագոյն կրթութեան տարածման մասին։ «Մինչդեռ Գերմանիայում մի միլիոն բնակչին ընկնում է 534 ուսանող, Ֆրանսիայում 460, Հուլանդիայում 685, Մեծ-Բրիտանիայում 362, Աւստրիայում՝ 328, Նիդերլանդիայում 350, Պորտուգալիայում՝ 274, Ռուսաստանում միայն 150։ Իսկ Ֆինլանդիայում, որ գրագէտ երկրագործների աշխարհն է, բարձրագոյն ուսանողների համեմատական թիւը Ռուսաստանի հետ բաղդատած 5 անգամ աւելի։

Ռուբակինի փաստերի հիման վրայ «եթէ վերցնենք միայն քաղաքները, ուր սովորաբար համախմբուած է՝ ինտելիգենցիան», «1000 բնակչին» ընկնում է «4 կրթուած մարդ». իսկ եթէ դիմենք փոքրիկ գիւղաքաղաքները, պետութեան ամեն մի վայրին ընկնում է կրթուած մարդու քիմիական մի չնչին մասը (0,1)։ Թէ ինչ ճանապարհով կրթուած մարդու $^1/_{10}$ մասը կարող է ազդել իւր շրջապատողների վրայ, կամ թէ 4 կրթ. մարդիկ կարող են այժ ունենալ քաղաքակրթելու 1000 քաղաքաղաքացիներին՝ առանց պետութեան աջակցութեան, այդ թողնում ենք ընթերցողի նրբամտութեանը։

Աղ. Թարխան.

հրաժեշտ է պարզել, բացատրել իրերի իսկական դրութիւնը։

Ահա մեր առջև դրուած գրքի՝ Этюды о русской читающей публикѣ. Факты, цифры и наблюденія Н. А. Рубакина. Спб. 1895.—Պատկերներ՝ ռուս ընթերցող հասարակութեան մասին։ Փաստեր, թուանշաններ և դիտողութիւններ, աշխ. Ռուբակինի) հեղինակը իւր վրայ է է ընդունել այդ բացատրութեան մի մասը։

Հեղինակին շատ վաղուց է զբաղեցրել ժողովրդի ընթերցանութեան խնդիրը, որից անկասկած կարելի է եզրակացնել, թէ ինչ պատկեր է ներկայացնում ռուս հասարակութեան ընդհանուր մասաւոր մակերևոյթը։ Պ. Ռուբակինի գրուածքը ոչ թէ հարևանցի դիտողութիւնների արդիւնք է, այլ մի պատկառելի լուրջ ուսումնասիրութիւն, որ տարիների գործ է։ Աշխատասիրութեան մի քանի գլուխները տակաւին լոյս են ընծայուել տարիներ առաջ զանազան պարբերական հրատարակութիւններում և և այժմս նորից են հրատարակուած ընդարձակ յաւելումներով ու ծանօթութիւններով։ Բաւական է միայն յիշատակել գրուածքի մի քանի գլուխները՝ «Աղէօք հարուստ է Ռուսաստանը գրքերով», «Գրքերի տարածման ձեր», «Ընթերցողների շրջանը», «Ի՞նչ է կարդում ռուս հասարակութիւնը» և այլն, որ ամեն մի ընթերցող ըմբռնէ, թէ առարկան որ ասպիճանի բարեխղճաբար է քննուում։

Հեղինակը բնաւ ցանկութիւն չունի քողարկել կամ կեղծ գոյնով լուսաբանել իւր հայրենիքի իսկական վիճակը, այլ մատնում է վէրքին իբրև փորձուած վիրաբոյժ և համարձակ դանակը խլում։

Եւ իրօք հեղինակի դիտողութիւնների ընդհանուր տպաւորութիւնը շատ և շատ անպատասխան է ռուս հասարակութեան և ռուս ինտելիգենցիայի համար։ Նա մի առ մի անհերքելի փաստերով ապացուցանում է, թէ ինչ ծայրայեղ աղքատութիւն է տիրում գրականական նիւթի, որ մասաւոր սնունդ պիտի մատակարարէր ընդարձակ պետութեան ժողովրդին։

Բայց աւելի հետաքրքիր են հեղինակի բերած թուանշանները, որոնք ընդունակ են սարսափեցնելու նոյն իսկ ամենալաւատես պատմասէրին։ Ակնյայտնի երևում է, որ Ռուսաստանն ընդհանրապէս լուսաւորութեան գործում ոչ թէ միայն յետ է մնացել եւրոպական պետութիւններից և Ամերիկայից, այլ մինչև անգամ Աւստրալիայից և նրա անգլիական գաղութներից։ Հեղինակի վկայութեամբ բազմաթիւ քաղաքներում չկան գրադարաններ. հետևապէս գրանց համար գրականութիւնը գոյութիւն չունէ։ Մամուլի գլխաւոր վարչութեան վիճակագրութեան նայելով 1887 թուակ. եւրոպական Ռուսիայի 659 քաղաքներում գոյութիւն ունէին միայն 590 գրատուն, մինչդեռ Զվէգկիայում 1879 թուին կար 1880 գրատուն (ասել է 3 անգամ աւելի քան Ռուսիայում 1887 թ.), Հուլիսբեռայում 2000, Իտալիայում 1852, Գերմանիայում 1609, իսկ Ֆրանսիայում գրադարան կայ ամեն մի քաղաքում, Անգլիայում բացի այդ և 225 մեծ կենդրոնական գրադարաններ։ Սակայն դէպքը, երբ թոյլատրութիւնն ստացուում է կարճ ժամանակամիջոցում, այլ ըստ մեծի մասին տեսում է ամեներ շնորհիւ գրագրութեան։ Այնուհետև մի այլ խոշընդոտ. դասախօսել և կարդալ կարելի է միայն լուսաւորութեան նախարարութեան ուսումնական խորհրդից հաստատուած գրքերի ցուցակից։ Իսկ այդ ցուցակում դուք չէք կարող գտնել ոչ Լերմոնտով, ոչ Տօլստոյ, ոչ Տուրգենեվ, ոչ Դոստոեվսկի։ Պուշկինից կարելի է կարդալ «Պոլտաւա», «Կապիտանի աղջիկը», այն էլ կրճատած. Գոգոլից միայն «Տարաս Բուլբան»՝ նմանապէս կրճատած։ Մի որոնէք նմանապէս այդ ցուցակում ռուս բանաստեղծներ՝ «Կոլցով» «Քուլով», «Նեքրասով», «Պոլոնսկի». դո՞ւք չարչարանք, թայլ տրուած բանաստեղծները շատ մօտ են մեր ազգային հրուշակաւոր «Մուրճ» ամսագրի բանաստեղծներին, որոնց ընթերցողների շրջանը խմբագրի, հեղինակի և սրբագրիչի անձնաւորութիւններով է սահմանափակուում։

Բայց մի փաստ, որ կատարեալ զոհար է բարբարոսութեան, այդ այն է՝ ինչպէս վկայում է պ. Ռուբակինը, որ կատարուել է 1888 թուականին Ուրալսկ քաղաքում։ Այնտեղ յիշեալ թուականին տեղի ունեցաւ մի խայտառակ հանդէս, որ ռուսական գրականութեան պատմութեան մէջ փայլուն էջեր է գրաւելու։ Ուրալսկում այրեցին 1445 հատոր գիրք։ Այրած գրքերի մէջ 1350 ամսագրեր էին, իսկ մնացեալները զանազան գրուածքներ (Սպենսէր, Միլլ...)։ Այդ ամօթալի գործողութիւնը ձեռակերպած էր հրաշքներ գործեցին, գրագրականի գործը կենդանութիւն առաւ...ընթերցարաններ հիմնուեցան նոյն իսկ այնպիսի վայրերում, ուր երեակայելի և հնարաւոր չէր համարուում մի այդպիսի հաստատութեան գոյութիւնը... Այդպէս տեսաց մինչև 80-ական թուականները, երբ սկսուեց խաղաղութիւն և խաւարամտութիւն տիրել. այնպէս որ այժմս և ոչ ոքին չպիտի զարմացնի, եթէ զրադարանի անկման և փակման փաստեր բերուի» (երես 33-34.)։ Ենթադրելու է, որ հեղինակն ակնարկում է կոմս Դ. Ա. Տօլստոյի որոշ կարգադրութիւնը, երբ հասարակաց գրադարաններից՝ զրաքննական բոլոր կանոնների համեմատ, հրատարակուած բազմաթիւ գրուածքներ իսպառ աքսորուեցան։

Եթէ մի բոլոր թողնենք Ռուբակինին և դիմենք մի այլ հեղինակի, որ նոյնպէս խօսում է այդ խնդրի մասին (Народная грамотность и народныя чтенія. Ст. Пругавина «Истор. Вѣстникъ» № 6—Ժողովրդական գրագիտութիւն և ժողովրդական ընթերցանութիւն) կը տեսնենք, որ վերջինս միանգամայն վաւերացնում է Ռուբակինի բերած փաստերը։ Պրուգավինի վկայութեամբ աւելի ողբալի վիճակի մէջ է ժողովրդական դասախօսութիւնների գործը։ Ներքին նահանգներում ժողովրդական դասախօսութիւնների թոյլատրութիւնը քաղաքներում և գիւղերում ամբողջովին յանձնուած է տեղական հոգևոր իշխանութիւններին, որոնք նոյնպէս ձեռնհաս չեն թայլ տալու, այլ պիտի դիմեն թեմական առաջնորդներին։ Հաղուագիւտ է այն մի առանձին արձանագրութեամբ և վաւերացրած երեք անձանց ստորագրութեամբ, որոնք մասնակցել էին այդ հանդիսաւոր առաւօ-դաֆէին։

Այն գլխում, թէ «Ի՞նչ է կարդում ռուս հասարակութիւնը», պ. Ստարոնովսկիի վիճակագրութեամբ յառաջ են բերած այլ անմխիթար տեղեկութիւններ բարձրագոյն կրթութեան տարածման մասին։ «Մինչդեռ Գերմանիայում մի միլիոն բնակչին ընկնում է 534 ուսանող, Ֆրանսիայում 460, Հուլանդիայում 685, Մեծ-Բրիտանիայում 362, Աւստրիայում՝ 328, Նիդերլանդիայում 350, Պորտուգալիայում՝ 274, Ռուսաստանում միայն 150։ Իսկ Ֆինլանդիայում, որ զրագէտ երկրագործների աշխարհն է, բարձրագոյն ուսանողների համեմատական թիւը Ռուսաստանի հետ բաղդատած 5 անգամ աւելի։

Ռուբակինի փաստերի հիման վրայ «եթէ վերցնենք միայն քաղաքները, ուր սովորաբար համախմբուած է՝ ինտելիգենցիան», «1000 բնակչին» ընկնում է «4 կրթուած մարդ». իսկ եթէ դիմենք փոքրիկ գիւղաքաղաքները, պետութեան ամեն մի վայրին ընկնում է կրթուած մարդու քիմիական մի չնչին մասը (0,1)։ Թէ ինչ ճանապարհով կրթուած մարդու $^1/_{10}$ մասը կարող է ազդել իւր շրջապատողների վրայ, կամ թէ 4 կրթ. մարդիկ կարող են այժ ունենալ քաղաքակրթելու 1000 քաղաքաղաքացիներին՝ առանց պետութեան աջակցութեան, այդ թողնում ենք ընթերցողի նրբամտութեանը։

Աղ. Թարխան.

մասուցած տեղեկագրությունն այն մասը, որ կը պատկանի հարկահաւաք ոստիկաններուն։ Դա բաղկացած է տասնուչորս յօդուածներից։

ա. Մեր գրկերը խոսք կարգը անցնելով կը քաշեն և կլսուին մեզ, որ անասունի նման չորս ոտքի վրայ քալենք։ Զմեզ այսպէս քաշելով կը տանին ջրի վրայ և կը ստիպեն որ չան նման ջուրը լափենք։ Երբ կը հրաժարենք այդ տեսակ գործողութենէն, սարսափելի կերպով հարուածներ կիջեցնեն մեր գլխին և մարմնոյն վրայ, ծեծելով ու քաշելով կը բերեն և կը բանտարկեն։

բ. Զմեզ մերկացնելով նախ ջուր ածելով և ապա փոշի վրանիս լցնելով սարսափելի կերպով կը ծեծեն։

գ. Կրկին զմեզ կը մերկացնեն, ցեխով ու ապրով վրանիս օծելէն զետի ժամերով գիւղի մէջ ծեծելով կը պտտցնեն։

դ. Գիշերներ մեր դռներ կտրելով ներս կը մտնեն, ամբողջ ընտանիք սարսափած մերկ անգամ դուրս կը թափեն և կանանց ու մարդկանց պակեր կապ ձգելով արջի նման խաղալու կը տանին։ Ընդդիմացողը չարաչար կը ծեծուի։

ե. Երբ տուն կը մտնեն տան մէջ գտնուած բոլոր հոգէ ամանները կը ջարդեն, որ ապրատի համար թանկագին է անուշ։

զ. Քահանաները ծեծելով, մուրուքնին քաշելով և ամեն սրբութիւնները հայհոյելով կը բանտարկեն։

է. Ամեն օր 8 հեծեալ ոստիկաններ կելնեն գաշտը, արտերու միջէն աշխատող մշակները չվիժած կը բերեն գիւղ։ Իսկ չորացած հունձքերը ձիերուն ոտնակոխ կընեն։ Արտերը կը մնան անբոյս։ Իսկ ցիւրդերն ու միւս մահմեդականները կամ քաղելով կը տանին և կամ քաղած կը տանեն. շատ անգամ ևս հրձիգութեան կը մատնեն գնոսա։ Այս մշակները օրերով գիւղի մէջ կը բանտարկեն, կանաչ արտեր ոտնակոխ կընեն՝ ձիաբշաներ ընելով։

ը. Ամեն մէկ գիւղ 20—30 այր մարդ և 10—15 կին հիւանդ կայ չարչարանքի և ծեծի պատճառաւ։

թ. Առանց թանսիթի սպասելու բոլոր տուրքերը միասին կուզեն։ Չնայած որ օրէնք կայ յատկապէս այս մասին սուլթաններէն վաւերացած, որ տուրքեր մաս մաս ստացուին և որոշ քանակութեամբ։

ժ. Ամբողջ գիւղացիք կը բանտարկեն ոստիկան անարգանաց ներքոյ։ Կը հաւաքեն թուրքեր ու քուրդեր և 500 զուրշի գամէշը 100 զուրշի, 200 զուրշի եզը՝ 80 զուրշի, կովը՝ 60 զուրշի, ոչխարը՝ 15 զուրշի և միւսներն ըստ կարգին ծախելով կը վերցնեն տուրքին փոխարէն։ Այսպիսով ահա կարուեցանք բոլորովին աշխատող և կամենու անասուններէն, ասն արդ ու գարդէն, վիրջապէս ամբողջ ունեցածէն։

ժա. Մեր արտեր, կալուածներ, շինութիւններ և ուրիշ երկրագործական անհրաժեշտ առարկաները կը ծախեն հնցած պ ա խ ե ն ե ր ու համար։

ժբ. Շատ անգամ ոստիկանապետը իւր գրպանէն գրամ կուտայ և վեց պատիկ արժողութեամբ մեր հոգերը, հունձքերը, կալուածներ և անասուններ և այն ամեն կը գրաւէ, ինչ որ դուրեկան և հաճելի կը թուի իրան։

ժգ. Գեղին և ոստիկաններուն բոլոր պիտոյքներով հոգացողութիւնը ձրիաբար մեզնէ կելլէ, և այն ևս ամենաշռայլ կերպով։ Այս հարկահաւաքներն են Ռաշիտ էֆէնդին և իւր ոստիկանները։ Ի դէպ. Ռաշիտ էֆէնդին Վարդենիսի և նորա շրջակայ մի քանի այլ գիւղերէն երբ հրացան ժողովուրդ պատրուակաւ Մուշէն դաշտ իջաւ, անլսելի չարիքներ գործեց, մարդկանց անմեղ բանտարկութեանց ահիմ եղաւ, մի շարք գիւղեր կասկածանքների ենթարկեց և վերջապէս չարիքի վրայ չարիաց աւելցնելով վերադարձաւ։ Հակառակ ժողովրդի անթիւ բողոքների, որ նա մատոյց իշխանութեան ընդդէմ այդ չարագործին, նա վարձատրուեցաւ իշխանութենից հարիւրապատութեան ատիճանով։ Այսպէս ալ տեղի ունեցաւ միւս հարկահաւաք ոստիկանների վերաբերմամբ և ամենքն ալ այս բողէիս սանձարձակ չարագործներ կարող են համարուել. չարագործ, ուելի քան լեռնային աւազակն և հեղուզակը։ Պէտք է խոստովանել, որ ասոնց չկայ յանցանք։ Ասոնք կառավարութեան ձեռքին մի լաւ գործիք են։ Քանիցս անգամ երբ բողոքեցինք կառավարութեանը՝ ասոնք աւելի կը խրատացնեն իրենց չարիքները։ Կառավարութիւնն է, որ ասոնց հրահանգ կուտայ գործելու այս անիրաւութիւններ և սակ հաւաքելու և այլն և այլն...»։

Այս 14-րդ յօդուածներին կը յաջորդէ վանդեալ գիւղերի անուանացուցակը և խոշտանգեալ մարդկանց թիւն ու անունները։

Այս տեղեկագրութիւնը անդլիական ազգի ներկայացուցչին յանձնելու ժամանակ ամենահասատ լուր հասաւ թէ գաշտի զանազան մասերում 25 հայ գիւղերի որաններ և խոտի դէզեր են հրդեհեր։ Հաշուած անգամ այն հրձիգութիւնը, որ կատարուած են ամսոյս 14-ին։ Այդ ժամանակ հրդեհեցին Դ ա ն ի կ գիւղի մէջ 25 բ ա ր դ (750 խուրձ) ցորեան։ Նոյն ամսոյ 15-ին Ալիջան գիւղի ամբողջ խոտի դէզեր։ Այս բամբասանացնող ընթացքը ամենօրեայ պահանջի կարգն է անցեր։ Դաշտի մէջ ամեն օր, ամեն ժամ, ամեն բոպէ կայրուեն թշուառ հայ շինականի դառն բրտինքի արդիւնքը. մի հանգամանք, որից կախեալ է անշուշտ նորա և իւր ընտանեաց ամբողջ տարուայ յոյսն ու ապաւէնը։ Բայց սուզել այդ բոլոր կատարուած անիրաւութիւնները՝ թէ որ գիւղի մէջն է—այդ անկարելի է։ Կան գիւղեր ու տեղեր, որոնց գաշտային արտերը կըսկսի վառել իրիկնապահից մինչև արշալոյսի բացումը, շատ անգամ ևս 24 ժամուայ ընթացքում, դադարեալ չեն վերջանար։ Հեշտ, շատ հեշտ կարելի էր անօգնական ժողովուրդը ինք զինք մատամբ տապանուած, ազատած տեսնէր, եթէ միայն մէկ թշնամի ունենար։ Այսօր կառավարութիւնը, թուրքը, ցիւրդը, չէրքէզ՝ միւս մահմեդական տարրով հանդերձ, ս է լ է վ չ ի ն ե ր, ցերեկուայ յանդուգն չարագործներ, աւազակներ, գիշերուայ գողեր, զօրք, զօրականք, ոստիկանութիւն, փոլիսները և վերջապէս ամբողջ այլակրօն տարը՝ մեծ թէ փոքր անխտիր՝ հայի խոպան գոյութեան հակառակ մտածմունքների մէջ են, կուզեն մէկ խօսքով վերացնել նորա անունը իւր սեպհական աշխարհից, այն աշխարհից, որ ունի դեռ պատմական ցիւրաւոր կենդանի ապացոյցներ, շքեղ անցեալի անշուք կոթողներ, խոսող անցքերի՝ անխօս վկաներ։ Ժողովուրդը այսօր ոչ այժ ունի և ոչ նիւթական կարողութիւն է մնացեր գիմադրելու այդ բոլոր չարիքներին, որ մի զօրեղ հեղեղաթի նման կուգէ ամեն բան առնել, վարարել իւր ափով։ Նա կըսպասէ և շարունակ կըսպասէ անմունչ։ Մէկ ժամ նորա համար՝ մէկ օր է. օրը՝ ամիս, իսկ ամիսը՝ տարի։ Չարիքներ, անիրաւութիւններ ոչ միայն կը պակասեն, այլ և կ'աւելանան ու կը զօրանան, կաճեն ու կը բազմանան։

Ռէհվի-Քուվի։

ՎԱՆ, օգոստոսի 2.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Նախորդ գրութեամբ, որքան կը յիշեմ, գրած էի, թէ Պատրիարքարանէն հոս հասած հեռագրի մը համաձայն ազատուեցան քաղաքիս հայ բանտարկեալները, որոնք քաղաքական յանցանքով բանտարկուած էին։ Այս թէպէտ ճշգութիւն մ'է, սակայն ոչ ընդհանուրի նկատմամբ։ Չնայած ազատութեան ցանկալի լուրը ընդհանուրի մասին այստեղ հասաւ, բայց հազիւ ընդհանրութեան քաղաքի մասին գործադրուեց։ Մէկ կողմէն որքան ամանք, որ կէս մասը կը կազմեն, իրենց սիրելիների ազատութեամբ կը ցնծան, սակայն միւս կողմէն հարիւրաւոր որտեր դարձեալ ի սուգ և ի լաց համակուած են։ Այս բողէիս դեռ բանտի գժոխատեղ կամարների տակ մօտ 100 ջահել, կեանքի մէջ նոր թեւակոխած երիտասարդներ իրենց անորոշ ան բաղդը կ'արտասուեն։ Զգիտեն թէ իրենց որ գործած յանցանքի համար են արժանացած այնպէսի ծանր պատիժների, որ միայն վայել է մարդասպան չարագործներին և սճրագործներին. . . Ասոնց մէջ կան թէ բնիկ քաղաքացիք և թէ գաւառացիք՝ մասնաւորապէս Զատալոյիք, որ ահա քանի տարի է իրենց չգործած մեղքի համար գան ապաշխարութեան են ենթարկուած։ Ընդհանուր բանտարկելոց անուան տակ, որքան ես գիտեմ, ազատուեցան մօտաւորապէս 25 հոգի։ Թէև ասոնց հետ մի քանի հոգի ալ ազատուողներ եղան, սակայն անոնք արդէն բաղաքական յանցանքով բանտարկուած չէին։

Անոնք, որոնք պիտի արժանանային սուլթանի հ ա յ բ ա կ ա ն գ ը թ ո ւ թ ի ւ ն ա ն, նախքան այդ շնորհին հասնելը ենթարկուեցան կրօնական այս կիրպ ծիսակատարութեան.

Իւրաքանչիւրն ես առանձին առանձին ներկայացան կուսակալին և Պատրիարքական փոխանորդ արժ. Սահակ վարդապետին։ Տուին անոնց առջև ի վերայ Խաչի և Աւետարանի հաւատարմութեամբ կենալու երդում, զոր անագարդ պիտի ունենան յետայսու առ գահն օսմանեան ասն (անշուշտ 500 տարուայ հլու հպատակութիւնը ջուրն ընկած համարելով). ապա օրհնելով փ ա գ ի շ ա հ ը ազատ մեկնեցան գէպի իրենց տուներն, ուր կարօտով սրտի կը սպասէին իրենց ծնողներն ու սիրելիները...

Այժմ ազատուողներն եղան ասոնք. Գարեգին Բաղէշցեան, Մ. Մարտիրոսեան, Յակոբ Կէնդոյեան, Անտիս Պէշոյեան, Վահան Սոսոյեան, Յարութիւն Սօլիաբեան, Խաչատուր Նեմենեան, Սանդրկանեան Յակոբ և իւր եղբայր, Սահակ Պէլիբեան, Մովսէս Մարտեան, Միհրդատ Եսիկեան, եղբարք Նազարեվ և Ղեոնդ Կարոյեանք, ոմանք Աւետիս, Սեդրակ, Մեսրոպ և միւսներ թուով մօտ 25 հոգի։ Ասոնց սէջէն Գարեգին Բաղէշցեանը և մի քանիսը ցկեանս բանտարկութեան էին դատապարտուած, իսկ միւսներ 12-էն մինչև 2 տարի։ Գարեգինը, որ ազնիւ երիտասարդ մի է, ձերբակալուած էր որպէս հերոս Կուռուպաշի փչաբաղ անցքին. մի անցք, որ իւր սոսկալի տեսարաններով համարեա խեղացնորութեան հասուց հերոսական քանի ներկայացուցիչների ընտանիքներ, երբ ի տես եղան անոնց դաղար բերելուս։

Ժողովրդի կացութիւնը օր ըստ օրէ աւելի կը ծանրանայ։ Պարտի անկումը կատարեալ կատաղեցուցեր է մահմեդական խաժանը, որոնք կըսպառնան մեծ ջարդ մը տալ հայերուն։ Նոյն կատաղութիւնը անոնք ունին նաև դէպի բրիտանականհիւպատոսարանը, զոր կանուանեն Հայոց աէրը։ Անցեալ օրը այնպէս լուր մը տարածուեց քաղաքիս ու անոր շրջակայից մէջ, թէ շուտով օրինական զօրքը պիտի միանայ համիդիական-ների ու ջելոնների հետ և այնպէս պիտի սկսի կոտորել հայեր, ասարի մատնել տանքեր, մենաստաններ, գիւղեր, չէներ և քաղաքներ։ Տեղ տեղ ևս արդարև լուր նշաններ երևացին։ Լուր հասաւ եւրոպական հիւպատոսարաններ, որոնք անմիջապէս ի զգուշութիւն հրաւիրեցին կառավարութեան, որ այդպիսի անխոհեմ քայլի մը ասելի չտայ, ապա թէ ոչ հետևանքը խիստ ծանր կը լինի Օսմանեան տէրութեան համար։ Քաղաքիս բրիտանական հիւպատոսը արդէն այս մասին հեռագրեց Կ. Պոլսի իրանց դեսպանին։ Եթէ չուտափոյթ ճար մը չըլլայ՝ Հայերուս սեռ վտանգ կըսպառնայ մոլեռանդ մահմեդականներէ և կացութիւնս օր ըստ օրէ դէպի վատը կը գնայ։ Ի՞նչպէս պիտի լինի, կըսպասեմ ա-սել, մանաւանդ վերահաս ձմրան, եթէ իրերի դրութիւնը այսպէս ընթանայ։

Վ.-ի.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և մեներ-կան հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻՆՈՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՀՀԵՐ-ԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ա-կանջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԿԱԲԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներ-քին և երեխայոց հ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը՝

Ի. Ֆ, ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք-շաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԳՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մկղի և սեռական օրգանների ներքին և մանրքի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԳՈ քիմի-խոշորացուցա-կան հետազօտութիւն է անում մկղի, խոխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսի-լիումի) և օգնականների համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօրկի, Սերգիւտկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով ամառս Տիւանդերին կ'ընդունէ դոկտոր Սամուէլ Շահ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի գեղեցիկ գործադրում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱՆԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱՆԱՆ և այլ ֆիզիքական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիրակի և ասն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյան { ազամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկարարձ-մասնաժ անոյ կին և մասնաժիտ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարգարաթ գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարգարաթ գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում վեշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Աղբանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Աղբանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մէլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և ուսանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և ուսանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8-ին, գիշերում է Մէլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և ուսանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ԶՈՐԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ չորեքշաբթի երեկոյթիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում՝

Զաքաթի օրերը (բայց կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով Նովօրոսիսկի, Կերչ, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստապոլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (բայց չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար շրջնաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (բայց հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում՝

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով։

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շրջնաւը, շրջանառու ընթացքով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Եւ վաճառւում է «Կենդր. գրավաճառանոցում»

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հեռնարկ

Հայ ուսուցիչների և թեմական դպրոցների վերջին դասարանի աշակերտների համար։

Գազմեց՝ ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Թիմական հոգեոր իշխանութեան կարգադրութեամբ առաջիկայ կիրակի, սեպտեմբերի 10-ին, առաւօտեան 12 ժամին, ս. պատարագից յետոյ կատարելու է Զրկինենց ս. Կարապետ եկեղեցւոյ երեցփոխանի և հաշուառեալների ընտրութիւն. ուստի նոյն եկեղեցւոյ ծխական ժողովուրդները հրաւիրւում են նշանակեալ օրը նոյն եկեղեցում ընտրութեան մասնակցելու համար։

Գործակալ եկեղեցեաց հայոց ս. մասին Ցվխաց՝ Գէորգ քահ. Գալստեանց։ 3—1

Լոյս տեսաւ

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ դասատուութեան պատրաստուողների համար։

Թարգմ. Յ. Սաֆիկեանի.

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.։

Գտնւում է «Կենդրոնական Գրավաճառանոցում։ 3—1

ԿԻՆ-ԲԺԻՇԿ

Ա. Ի. ՇԱՐԲԻՆԻՆԱ.

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ, տուն Արկովի։

Լոյս տեսաւ

ԲԱՖՖԻ

„ԶԱՀՐՈՒՄԱՐ“

(Վ է պ ը)

ԳԻՆՆ Է 2 Ռ.

Բաժանորդները պէտք է ուղարկեն բաժանորդագրութեան թերթը և իրանց հասցէն։

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի հեղինակի

«ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ»

Բոլոր մասերն էլ ամփոփած կըլլինի մի գրքի մէջ։

Կանխիկ վճարել ցանկացողներին 2 ր., իսկ լոյս տեսնելուց յետոյ 2 ր. 50 կ.

Ցանկացողները պէտք է դիմեն՝

Тифлисъ, Анне Раффи.

(10—3)

ՄԻ ՓՈՐՁՈՒԱԾ ՎԱՐԺՈՒՀԻ, որ վարել է մի քանի տարի ուսուցչուհու պաշտօն գաւառներում, ցանկանում է տեղ ունենալ գիւղաքաղաքներում. կարող է պարապել միջնասեան դպրոցի բոլոր առարկաները բացի ռուսաց լեզուից։ Հասցէն՝

Большая кривая улица № 64. Спросить учительницу. 5—2

ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ

(Тифлисъ, Гудовича ул., домъ № 8, 3-рд գիմնազիայի պանսիօնի նախկին բնակարանը)

Բաղկանում է ԵՐԿՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ եւ մի ՆԵՐԿԱՅԱՐԱՆԻՑ

Աշակերտներ ընդունվում են բոլոր պետական միջնակարգ դպրոցները մտնելու՝ գիշերօթիկներ, ցերեկօթիկներ և երթեւեկներ. բացի այդ՝ պանսիօնում ընդունվում են նաև աշակերտներ սերտողութեամբ (репетиція) հանդերձ պետական դպրոցներից։

Ընդունելութիւնը կըսկսուի դոգոստոսի 21-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից։ (4—4)

ՍՏԵՑՈՒԱԾ Է ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

(ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՍՏԱՏԵՂԱՊԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՑ)

ԻՍԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՐՔԵՐՈՎ

ԳԻՆԸ 30 Կ. ՄԻՆՉԵՒ 1 Ռ. 50 ԿՈՊԷԿ։

Դիմել՝ Тифлисъ, Михайловскій мостъ, магазинъ С. Матинянца.

«ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ» վաճառվում են ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵՆՑԻ հետեւեալ աշխատութիւնները.

		Ռ.	Կ.
ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ			
Թուաբանական խնդիրներ եւ օրինակներ I և II տարի	(Գօլդենբէրգի)	.	30
» » » III տարի	(Գօլդենբէրգի)	.	35
Բնախօսութիւն Փօսթէրի, յիսունից իջեցրած		—	30
ՈՒՍԻՑՉԱՑ ՀԱՄԱՐ			
Պատմութիւն Մանկավարժութեան		1	—
Դասաւանդման խորհուրդներ, իրենցից իջեցրած		—	20

(10—2)

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑԻ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ

անունով գիրքն

ընդունուած է Բարձրագոյն Հոգեոր Իշխանութիւնից, որպէս յարմարագոյն դասագիրք ծխական ուսումնարանների համար։ Վաճառւում է «Կենդրոնական գրավաճառանոցում»։

ԳԻՆՆ Է 80 ԿՈՊ.

ԼՈՑՆ ՏԵՍԱԼ

Յ. ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ բարեհաճ հրամանով մտած է հայոց դպրոցներում գործադրուող դասագրքերի ցանկը (որպէս և առաջին տարին)։

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԷԿ

Գումարով գնողներին 24 կոպէկ։

Дозволено цензурою, Тифлисъ 5-го Сентеабря 1895 года. Տպարան Մնացականի Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.